ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1747: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՇԱԲԱԹ, 27 ՓԵՏՐՎԱՐԻ 2016Թ.
№ 6 (382)
www.syuniacyerkir.am

Կնքվել է Քաղաքական համագործակցության համաձայնագիր

2016թ. փետրվարի 24-ին ՀՀ նախագահի նստավայրում Հայաստանի Հանրապետական կուսակցության եւ Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության միջեւ կնքվել է Քաղաքական համագործակցության համաձայնագիր: Հայաստանի Հանրապետական կուսակցության կողմից այն ստորագրել է ՀՀԿ նախագահի տեղակալ Արմեն Աշոտյանը, Հայ Յեղափոխական Դաշնակցության կողմից՝ ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի ներկայացուցիչ Աղվան Վարդանյանը:

էջ 6

Մեղրին հակադրվում է համայնքների խոշորացմանը

2015թ. մարտի 19-ին կառավարությունը մեկնարկ տվեց համայնքների խոշորացման ծրագրին. հայեցակարգն ընդունվել էր 2011թ. նոյեմբերի 10-ին: Սյունիքում առաջին քայլն այդ ուղղությամբ արդեն արված է. նկատի ունենք Տաթեւի ենթաշրջանի գյուղերը մեկ համայնքի մեջ միավորելը, որն ավարտվեց փետրվարի 14-ին՝ այդ համայնքում ՏԻՄ ընտրություններ անցկացնելով:

Խոշորացման համար Սյունիքի մարզում (բացի վերը նշված տարածաշրջանից) ընդգրկվել է եւս երեք համայնքային փունջ: Դրանք են՝ Սառնակունք (Սառնակունք, Ծղուկ, Գորայք, Սպանդարյան), Գորիս (Գորիս, Ակներ, Վերիշեն, Քարահունջ), Մեղրի (Մեղրի, Ագարակ, Ալվանք, Գուդեմնիս, Լեհվազ, Լիճք, Կարճեւան, Կուրիս, Նռնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր, Տաշտուն):

Նշված երեք փնջում, ըստ էության, առաջին միավորումը (խոշորացումը) տեղի կունենա Մեղրու տարածաշրջանում:

Փետրվարի 24-ին Երեւանի գեղագիտական դաստիարակության կենտրոնի Մեղրու մասնաճյուղի դահլիճում կազմակերպվել էր հանդիպում Մեղրի համայնքի բնակչության ներկայացուցիչների հետ:

Հանդիպման էին եկել ՀՀ տարածքային կառավարման նախարարության տեղական ինքնակառավարման վարչության պետ Աշոտ Գիլոյանը, փորձագետ Վահան Մովսիսյանը, Սյունիքի մարզպետարանի ներկայացուցիչ Սեյրան Ավետիսյանը:

Վ.Մովսիսյանը ներկայացրեց համայնքների խոշորացման նպատակը, իրականացման ուղիներն ու մոդելները:

Դահլիճն ի սկզբանե զայրույթով ընդունեց համայնքների խոշորացման ծրագիրը Մեղրու տարածաշրջանում ներդնելու գաղափարը՝ դա համարելով տարածաշրջանի գյուղերի քայքայման ու վերացման ուղի:

Հավաքված մոտ 200 մեղրեցիները ծափահարություններով արձագանքեցին ելույթ ունեցող համաքաղաքացիներին, ովքեր դեմ էին արտահայտվում տարածաշրջանի բնակավայրերը մեկ համայնքի մեջ միավորելու ծրագրին (իսկ ելույթ ունեցող մեղրեցիները, առանց բացառության, դեմ էին այդ գաղափարին):

Հանդիպումն, ըստ էության, իրազեկման, խորհրդատվության խնդիր ուներ, ուստի եւ որեւէ ամփոփիչ փաստաթուղթ չընդունվեց:

Մնում է սպասել եւ տեսնել՝ ՀՀ կառավարությունն ընդառաջ կգնա՞ մեղրեցիներին, թե՞ համայնքների խոշորացումը կկատարվի տեղի բնակչության կամքին հակառակ: Հետաքրքիր է, կառավարությունը պատրաստվո՞ւմ է հանրաքվեի միջոցով իմանալ մեղրեցիների պաշտոնական կարծիքը, որ սահմանադրական պահանջ է, թե՞ կբավարարվի նման հանդիպումներով կամ հարցախույզներով:

Վերջում հիշենք ՀՀ սահմանադրության հոդված 190-ի պահանջը՝ **«Հանրային շահերից ելնելով՝ համայնքները կարող են օրենքով միավորվել կամ բաժանվել: Ազգային ժողովը համապատասխան օրենք ընդունելիս պարտավոր է լսել այդ համայնքների կարծիքը»:**

Մեղրեցիների հետ հանդիպմանը մասնակցում էր նաեւ Մեղրու քաղաքապետ Արշավիր Հովհաննիսյանը:

ՄԵՐԻ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

Եկեղեցի ասելով գմբեթավոր են շենքն են հասկանում, ուր սրբերի պատկերներ կան, վառած մոմեր ու տերտերներ, թեեւ հենց բառը-եկեղեցի բոլորովին այլ բան կնշանակի: Հոգեւորական ասելով երկար շորեր են հասկանում ու երկար միրուք: Եվ եթե նա ավեւտարանը փչացնի-ոչինչ, բայց եթե միրուքը խուզի, անշուշտ մեծ իրարանցում կնգի հավատացյալների մեջ: Քրիստոնեություն ասելով մկրտություն, պատարագ, պսակի ու թաղման, տնօրհնեքի ու գերեզմանօրհնեքի եւ այլ արտաքին ծեսեր ու արարողություններ են հասկանում...

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հյուսիս-հարավ ճանապարհի կառուցման տարբերակները

Հյուսիս-հարավ ճանապարհի կառուցման աշխատանքները տեղափոխվում են Սյունիքի մարզ: Փետրվարի 23-ին Սյունիքի մարզպետարանում տեղի ունեցավ հանրային քննարկում, որին մասնակցում էին Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը, «Հյուսիս-հարավ ծրագրի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի մասնագետները, մարզի քաղաքային եւ գյուղական համայնքների ներկայացուցիչներ, «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր» կազմակերպության «Տրանշ-4» թիմի ղեկավար Աթիլիո Սիվիերոն: Նախագծային թիմի ներկայացուցիչները վստահեցրին, որ նախագծի իրականացման ընթացքում հաշվի է առնվելու յուրաքանչյուրի կարծիքը:

Շահագրգիռ համայնքների ղեկավարների մասնակցությամբ քննարկեցին Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի համար առաջարկվող երեք տարբերակը: Իտալական խորհրդատվական ընկերության ներկայացուցիչ Աթիլիո Սիվիերոն, ով զբաղվում է Հյուսիս-հարավ ճանապարհի Արտաշատ-Քաջարան հատվածի տեխնիկատնտեսական ուսումնասիրությամբ, Սիսիան-Քաջարան հատվածի նախագծմամբ, ներկայացրեց առաջարկվող տարբերակները, այնուհետեւ տարբերակների վերաբերյալ իրենց նկատառումները հայտնեցին Կապանի, Դարբասի, Շենաթաղի, Վերին Խոտանանի, Լեռնաձորի համայնքների ղեկավարները:

«Հյուսիս-հարավ ծրագրի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տեղամասային ճարտարագետ Արթուր Սանոյանի փոխանցմամբ՝ արդեն ավարտվել է Ագարակ-Քաջարան ճանապարհահատվածի տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը, պատրաստվում են մրցութային փաստաթղթերը՝ Ագարակ-Վարդանիձոր 20 կիլոմետրանոց ճանապարհահատվածի նախագծման եւ շինարարության մրցույթի համար:

Նոր ճանապարհը, կախված ընտրվելիք ծրագրից, 50-80 կիլոմետրով կարճ է լինելու ներկա մայրուղու համեմատ, դա տեղի կունենա թունելների, կամուրջների, ճանապարհային հանգույցների ավելացման հաշվին:

ՊՈԱԿ-ի սոցիալական նախագծման եւ վերաբնակեցման մասնագետ Սոնա Պողոսյանը տեղեկացրեց, որ հողերի փոխհատուցման գործընթացը կատարվելու է պետբյուջեի եւ ոչ թե վարկային միջոցների հաշվին: *«Շատ արդյունավետ մեխանիզմներ են մշակվել հողօտարման եւ փոխհատուցման առումով, Հյուսիս-հարավ ճանապարհի հյուսիսային հատվածում բավականին լուրջ հողօտարումներ են իրականացվել, հնարավորինս փոխհատուցվել են բոլոր ազդեցությունները, որ մարդիկ կրել են՝ սկսած անշարժ գույքից մինչեւ խոցելի խմբերին որոշակի նպաստներ առաջարկելը,* - ներկաներին իրազեկեց Ս.Պողոսյանը, - *ազդեցությունների ողջ շրջանակը ներառում ենք եւ ձգտում ենք հնարավորինս փոխհատուցել, վերականգնել մարդկանց կենսամակարդակը մինչեւ ծրագրի ավարտը»:*

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սուրեն Խաչատրյանը՝ Գորիսի պետական համալսարանի խորհրդի նախագահ

Փետրվարի 20-ին տեղի ունեցավ «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նիստ: Օրակարգում կառավարման խորհրդի նախագահի ընտրությունն էր: Նիստի ընթացքում, որը վարում էր ՀՀ ԿԳ փոխնախարար Մանուկ Մկրտչյանը, նախագահի թեկնածու առաջադրվեց Սյունիքի մարզպետ, խորհրդի անդամ Սուրեն Խաչատրյանը, ով գաղտնի քվեարկության արդյունքներով միաձայն ընտրվեց խորհրդի նախագահ: Մինչ այդ խորհուրդը գլխավորում էր Սյունիքի նախկին մարզպետ Վահե Հակոբյանը:

Շնորհակալություն հայտնելով խորհրդի անդամներին վստահության համար՝ Սուրեն Խաչատրյանը նշեց, որ խորհուրդը՝ որպես համալսարանի կոլեգիալ կառավարման մարմին, բնականոն հունով շարունակելու է իր գործունեությունը՝ համաձայն եւ ի շահ համալսարանի զարգացման հեռանկարային պլանի:

Ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Զարեհ Գրիգորյանը եւ գլխավոր հաշվապահ Ռուզան Թապտուղյանն ամփոփեցին համալսարանի 2015թ. գործունեությունը: Համալսարանի առկա խնդիրների եւ առաջիկա անելիքների մասին ելույթով հանդես եկավ ռեկտորի պաշտոնակատար, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտուշ Ղուկասյանը՝ ներկայացնելով բուհական գործընթացի կատարելագործմանը միտված առաջարկներ:

Խորհրդի անդամները քննարկեցին նաեւ ընթացիկ հարցեր, հանդես եկան առաջարկություններով, ստացան հանձնարարականներ խորհրդի նախագահի կողմից:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կադրային փոփոխություններ մարզի ոստիկանությունում

ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի հրամանով փետրվարի 19-ին զբաղեցրած պաշտոնից ազատվել է ոստիկանության Սիսիանի բաժնի պետ Գուրգեն Բեգլարյանը, որին փոխարինել է նույն տարածքի պահպանության բաժնի պետ Արմեն Մարկոսյանը: Գուրգեն Բեգլարյանը նշանակվել է Արագածոտնի մարզային վարչության պետի տեղակալ: ՀՀ ոստիկանապետի մեկ այլ հրամանով ոստիկանության Կապանի բաժնի պետ Արսեն Ավոյանը նշանակվել է Վայոց ձորի մարզային վարչության պետի տեղակալ, իսկ Կապանի ոստիկանապետ է նշանակվել Գեւորգ Խաչատրյանը:

Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանը Սյունիքում

Փետրվարի 24-ին Սյունիքում էր Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Սեյեդ Քազեմ Սաջադը:

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի հետ նա այցելեց Մեղրու մաքսակետ՝ ուղեկցությամբ Հայաստանում աշխատող մի քանի իրանցի գործարարների, Մեղրու եւ Ագարակի քաղաքապետներ Արշավիր Հովհաննիսյանի եւ Մխիթար Զաքարյանի:

Մեղրու մաքսակետում նրանք հանդիպեցին Իրանի Իսլամական Հանրապետության Նորդուզի մաքսակետի պատասխանատուների հետ եւ քննարկեցին ընթացիկ հարցեր՝ հարեւան մարզերի համագործակցության հետագա ակտիվացման ու առկա խնդիրների լուծման ուղղությամբ:

ՍԻՐՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011 թվականի հունիսի 15-ի N 551-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասին եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի N 975-Ն որոշման հավելվածի 8-րդ կետին համապատասխան՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011 թվականի հունիսի 15-ի «Գորիսի պետական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպության խորհրդի կազմը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2006 թվականի հունիսի 8-ի N 405-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասինե N 551-Ա որոշման հավելվածում կատարել հետեւյալ փոփոխությունները՝

1) «Հիմնադրի անունից առաջադրված խորհրդի անդամներ» բաժինը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հիմնադրի անունից առաջադրված խորհրդի անդամներ

Ս. Խաչատրյան - ՀՀ Սյունիքի մարզպետ

Մ. Մկրտչյան - ՀՀ կրթության եւ գիտության նախարարի տեղակալ

Վ. Դավթյան - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ

Վ. Ադունց - ՀՀ Գորիսի քաղաքապետ (համաձայնությամբ)

Ս. Խաչատրյան - «Որոտան հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն (համաձայնությամբ)

Լ. Սարգսյան - «Փյունիկ» հիմնադրամի նախագահ (համաձայնությամբ)».

2) «Լիազոր մարմնի կողմից առաջադրված անդամներ» բաժնում «Ա. Ղուկասյան - ՀՀ կրթության եւ գիտության նախարարության «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ (համաձայնությամբ)» բառերը փոխարինել «Ռ. Սուքիասյան - ՀՀ կրթության եւ գիտության նախարարության աշխատակազմի բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ» բառերով.

3) «Պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված խորհրդի անդամներ» բաժնում՝

ա. «Կ. Սահակյան – Գորիսի պետական համալսարանի մանկավարժական բնագավառի մասնագիտությունների ֆակուլտետի դեկան» բառերը փոխարինել «Թ. Մարության - Գորիսի պետական համալսարանի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի դոցենտ» բառերով,

բ. «Գ. Մանուչարյան - Գորիսի պետական համալսարանի իրավախորհրդատու, դասախոս» բառերը փոխարինել «Ս. Հայրապետյան - Գորիսի պետական համալսարանի կենսաբանության եւ քիմիայի ամբիոնի ասիստենտ» բառերով.

4) «Ուսանողության կողմից ընտրված խորհրդի անդամներ» բաժնում՝

ա. «Ա. Բաբախանյան - Գորիսի պետական համալսարանի «Կրթության կառավարում» մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող, ուսանողական խորհրդի նախագահ» բառերը փոխարինել «Ա. Էվունց - Գորիսի պետական համալսարանի ճարտարագիտական մասնագիտությունների ֆակուլտետի ուսանող» բառերով,

բ. «Հ. Բախշյան -Գորիսի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող» բառերը փոխարինել «Մ. Իվանյան -Գորիսի պետական համալսարանի մանկավարժական հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հայոց լեզու եւ գրականություն բաժնի ուսանող» բառերով,

գ. «Հ. Գրիգորյան -Գորիսի պետական համալսարանի մանկավարժական հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող» բառերը փոխարինել «Ս. Մկրտչյան -Գորիսի պետական համալսարանի մանկավարժական հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի մանկավարժություն եւ մեթոդիկա բաժնի ուսանող» բառերով,

դ. «Ա. Դավթյան - Գորիսի պետական համալսարանի ճարտարագիտական մասնագիտությունների ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող» բառերը փոխարինել «Մ. Ստեփանյան - Գորիսի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի ուսանող» բառերով,

ե. «Մ. Նուրիջանյան - Գորիսի պետական համալսարանի մանկավարժական բնագիտական մասնագիտությունների ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող» բառերը փոխարինել «Գ. Մուսախանյան - Գորիսի պետական համալսարանի պատմաիրավագիտական ֆակուլտետի ուսանող» բառերով.

զ. «Գ. Բարխուդարյան - Գորիսի պետական համալսարանի պատմաիրավագիտական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող» բառերը փոխարինել «Ա. Հարությունյան - Գորիսի պետական համալսարանի մանկավարժական բնագիտական ֆակուլտետի ուսանող» բառերով:

Հովիկ Աբրահամյան
17 փետրվարի 2016, 73 - Ա,
e-gov.am

Վախճանվել է մեր մեծ բարեկամը

Կյանքից անժամանակ հեռացավ պատմաբան, աղբյուրագետ, պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանը: Դասախոսական գործունեությունը գիտնականը զուգակցել է ակտիվ գիտական աշխատանքի հետ, հրապարակ հանել 300-ից ավելի ուսումնասիրություն, այդ թվում՝ մի քանի մենագրություն, բազմաթիվ հոդվածներ, գրախոսություններ: Հեղինակել եւ խմբագրել է բուհական դասագրքերի առանձին բաժիններ: Մինչեւ կյանքի ավարտը Պետրոս Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների կիզակետում եղել եւ մնում էր հայագիտության նշանավոր դեմքերից մեկի՝ մեր հայրենակից Նիկողայոս Ադոնցի պատմական ժառանգության ուսումնասիրությունը, որին էլ նվիրել է տասնյակ հոդվածներ ու մի քանի մենագրություն, հրատարակել ականավոր պատմաբանի երկերի վեց մեծածավալ հատոր:

Պետրոս Հովհաննիսյանը «Սյունյաց երկրի» մեծ բարեկամն էր: 2011թ., երբ լույս տեսավ թերթի հատուկ համարը՝ նվիրված մեծ բյուզանդագետի 140-ամյակին, Պետրոս Հովհաննիսյանը հանդես եկավ Նիկողայոս Ադոնցի կյանքին ու գործին նվիրված «Վիթխարի անհատականություն» հոդվածով: Նույն թվականի դեկտեմբերի 2-ին Սիսիանում տեղի ունեցավ Նիկողայոս Ադոնցի 140-ամյակին նվիրված գիտաժողով, որտեղ պատմաբանը հանդես եկավ «Ճակատագրական երեք ստորագրություն Նիկողայոս Ադոնցի կենսագրությունում» զեկուցմամբ: Նա ներդրում ունեցավ Հայոց մեծ Մովսեսին նվիրված բացառիկ համարի նախապատրաստման գործում: Նրա հորդորով տեր Արարատ քահանա Պողոսյանը պատրաստեց «Մովսես Գ Տաթեւացի. մատենագիտական ակնարկ»-ը: Նրա արժեւորմամբ գիտական գնահատական ստացավ նույն համարի խմբագրականը: Իսկ այս օրերին թերթը հերթական հատուկ համար է պատրաստում, ինչի առիթով Պետրոս Հովհաննիսյանը պատրաստակամություն էր հայտնել համագործակցել. մահվանից ընդամենը մեկ օր առաջ էր նա հեռախոսային խոսակցություն ունեցել թերթի խմբագրի հետ եւ հիացական խոսքեր ասել «Սյունյաց երկրի» նոր նախաձեռնության կապակցությամբ: Սակայն, ավաղ, հանկարծահաս մահն անսպասելիորեն դաժան գտնվեց:

«Սյունյաց երկիրը» իր ափսոսանքն է հայտնում պատմաբանի մահվան առիթով եւ ցավակցություն հայտնում հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

«Սյունյաց երկիր»

Իրավիճակ

Դատավոր Անահիտ Թումանյանը՝ ընդդեմ Հայաստանի օրենքների

Նա կեղծ քաղվածք է վկայակոչում ՀՀ սահմանադրությունից, շրջանցում օրենքի կոնկրետ պահանջը, խոչընդոտում լրագրողի օրինական մասնագիտական գործունեությանը եւ հռչակում՝ իմ «որոշումը ենթակա չէ բողոքարկման»

ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ Արման Մկրտումյանին
ՀՀ գլխավոր դատախազ Գեւորգ Կոստանյանին

Հարգելի պարոն Մկրտումյան
Հարգելի պարոն Կոստանյան

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում ՍԴ/1459/02/15 քաղաքացիական գործն ըստ հայցի Գագիկ Ղահրամանյանի ընդդեմ Սամվել Ալեքսանյանի:

Քաղաքացիական գործը վարույթ է ընդունել եւ քննում է դատավոր Անահիտ Թումանյանը:

Գտնում ենք՝ գործը վարույթ է ընդունվել ՀՀ օրենսդրության կոպիտ խախտումով: Եվ դա, մեր խորին համոզմամբ, արվել է ոչ պատահմամբ կամ թյուրիմացաբար, այլ՝ գիտակցաբար ու ստույգ նպատակով: Վերջին երեք տարում հենց այդ դատավորն է (սեփական կլանի մանր շահերն ու հետաքրքրությունները պաշտպանելու նպատակով) հանձն առել Սյունիքի մարզում եւ մասնավորապես Կապան քաղաքում խոսքի ազատության դեմ պայքարի անփառունակ առաքելությունը, ինչը դրսեւորվել է «Սյունյաց երկիր» թերթի դեմ հարուցված հայցերի քննության ժամանակ: Նկատի ունենք թ՛ւ ՍԴ/0397/02/13 գործի քննությունը, եւ՛ ՍԴ/0194/02/15 գործը: Ընդ որում՝ վերջին գործի քննության նախնական դատական նիստում (8 սեպտեմբերի 2015թ.) բացարկ եմ հայտնել դատավոր Անահիտ Թումանյանին, ինչը, մի շարք վիճելի եւ անհասկանալի հիմնավորումներով, մերժվել է:

Սակայն ՍԴ/1459/02/15 քաղաքացիական գործը վարույթ ընդունելիս դատավորը թույլ է տվել արարք, որը ոչ միայն գործող օրենսդրության կոպիտ խախտում է, այլեւ իմ մասնագիտական օրինական գործունեությունն իրականացնելու ճանապարհին լուրջ խոչընդոտ՝ ՀՀ քրեական օրենսգրքով անթույլատրելի ու պատժելի գործողություն (հոդված 164):

Այդ հանգամանքն էլ Ձեզ դիմելու պատճառ է դարձել՝ ակնկալելով ստեղծված իրավիճակի պատշաճ քննություն:

Ստորեւ՝ դատավոր Անահիտ Թումանյանի վերջին արարքի բովանդակության նկարագրությունը:

Դատավորը 2016թ. հունվարի 11-ին ընդունել է որոշում *«Հայցադիմումը վարույթ ընդունելու եւ նախնական դատական նիստ նշանակելու մասին»:* Որոշման մեջ արձանագրել է՝ *«Այժմ այն համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված հայցադիմումի ձեւին եւ բովանդակությանն առաջադրվող պահանջներին, բացակայում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասով եւ 92-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հայցադիմումի ընդունումը մերժելու եւ վերադարձնելու հիմքերը, ուստի գտնում եմ, որ հայցադիմումը պետք է ընդունվի վարույթ»:*

Դատավորը, փաստորեն, վկայակոչել է ՀՀ քաղաքացիական

ԱՐՄԱՆ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ

ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆ
ՀՀ գլխավոր դատախազ

դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածը, 91-րդ հոդվածի 1-ին մասը, 92-րդ հոդվածի 1-ին մասը, բայց շրջանցել է 91-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, որի համաձայն՝ *«Դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝ 2) նույն անձանց միջեւ նույն առարկայի մասին եւ միեւնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ»:*

Ա.Թումանյանը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելիս ղեկավարվել է (ինչպես նշված է որոշման մեջ) ՀՀ քաղաքացիական դատավարության

ԱՆԱՀԻՏ ԹՈՒՄԱՆՅԱՆ
Դատավոր

օրենսգրքի 90, 144, 149.5 եւ 149.8 հոդվածներով:

Մինչդեռ, մատնանշված հոդվածներից եւ ոչ մեկը թույլ չի տալիս դատավորին շրջանցել նույն օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:

Ավելին, հոդված 90-ի 2-րդ մասով պահանջվում է՝ *«Դատավորը պարտավոր է վարույթ ընդունել սույն օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը»,* ինչը նույնպես անտեսել է դատավորը:

Դատավորն անտեսել է իր իսկ վկայակոչած հոդված 144-ի 2-րդ մասի 4-րդ կետը, որի համաձայն՝ *«Առանձին ակտի ձեւով կայացված որոշման մեջ պետք է նշվեն՝ 4) շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետեւությունների՝ օրենքների եւ այլ իրավական ակտերի վկայակոչմամբ»*:

Հայցը վարույթ ընդունելու հետ կապված վիճելի հարցերը ողջամիտ կասկած են հարուցում դատավորի անկողմնակալության հանդեպ: Վիճելի այդ հարցերը վկայում են նաեւ, որ դատավորն ունի կանխակալ վերաբերմունք, ինչի մասին հայտնել եմ նաեւ հայցադիմումի պատասխանի մեջ: Այդ ամենն էլ պատճառ է դարձել, որ 2016թ. փետրվարի 18-ին նախնական դատական նիստում բացարկ հայտնեմ դատավոր Ա.Թումանյանին:

Փետրվարի 22-ին, սակայն, Ա.Թումանյանն ընդունել է որոշում՝ իմ կողմից դատավորին բացարկ հայտնելու միջնորդությունը մերժելու մասին:

Մերժումը հիմնավորել է ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ, 144-րդ եւ 140-րդ հոդվածներով:

Ա.Թումանյանի վկայակոչած օրենքների նշված հոդվածներից եւ ոչ մեկը, ցավոք, թույլ չի տալիս շրջանցել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, որի համաձայն *«Դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝ 2) նույն անձանց միջեւ նույն առարկայի մասին եւ միեւնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ»:*

Ավելին, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածը, որ վկայակոչվել է մերժման մասին որոշման մեջ, պարտադրում է Ա.Թումանյանին՝ անհապաղ ընդունել ինքնաբացարկ: Ահա այդ հոդվածի 1-ին կետը՝ *«Դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անկողմնակալության մեջ»:* Ա.Թումանյանը տեղյակ է եղել, որ ՀՀ քաղ.դատ. օր.-ում գոյություն ունի խոչընդոտ, բայց շրջանցել է այն՝ կատարելով հակաօրինական գործողություն:

Ա.Թումանյանը վկայակոչել է ՀՀ սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասը: Ըստ Ա.Թումանյանի՝ սահմանադրության այդ հոդվածն ամրագրում է՝ *«յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաեւ իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:*

Ա.Թումանյանը կեղծել է նաեւ ՀՀ սահմանադրությունից բերված (վերոգրյալ) քաղվածքը: Բացեք, խնդրում եմ, ՀՀ սահմանադրությունը եւ ընթերցեք 19-րդ հոդվածի 1-ին մասը: Այնտեղ գրված է՝ *«Հայաստանի Հանրապետությունը հայկական սփյուռքի հետ իրականացնում է համակողմանի կապերի զարգացմանը եւ հայապահպանմանն ուղղված քաղաքականություն, նպաստում է հայրենադարձությանը»:*

Եզրակացությունս հետեւյալն է՝ կամ Ա.Թումանյանը տեղյակ չէ, որ երկրում սահմանադրություն է փոխվել, կամ էլ լսել է սահմանադրություն բառը, բայց չգիտի, թե ինչ է այն:

Բայց դա չի խանգարում, որ հարցնենք Ա.Թումանյանին՝ ի՞նչ կապ ունեն ձեր վկայակոչումները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հետ:

Եվս մեկ անգամ հիշեցնում եմ՝ խոսքն իմ հեղինակած «Թշվառականը» հոդվածի մասին է, որ հրապարակվել է 2013թ. օգոստոսի 8-ին «Սյունյաց երկիր» թերթի էլեկտրոնային կայքում, այնուհետեւ՝ թերթի 2013թ. սեպտեմբերի 3-ի թիվ 22 (295)-ում:

Նույն հայցվորի կողմից այն ժամանակ հայց է հարուցվել ընդդեմ Սամվել Ալեքսանյանի: 2014թ. ապրիլի 2-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը (նախագահող դատավոր՝ Ա.Թումանյան) ընդունել է վճիռ այդ հայցի վերաբերյալ:

Պատասխանողը վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը (նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան) 2014թ. օգոստոսի 15-ի վճռով վերաքննիչ բողոքը մերժել է եւ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. ապրիլի 2-ի վճիռը թողել օրինական ուժի մեջ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել պատասխանողի ներկայացուցիչը: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատը (նախագահությամբ՝ Ե. Խունդկարյանի) 2014թ. դեկտեմբերի 3-ին մերժել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը: Որոշումը եղել է վերջնական եւ բողոքարկման ոչ ենթակա: Այդ ամենից հետո վճիռը լիովին կատարվել է մեր կողմից:

Հիմա նույն անձը նույն առարկայի վերաբերյալ եւ նույն հիմքերով հայց է հարուցում միեւնույն անձի դեմ, իսկ Ա.Թումանյանը վարույթ է ընդունում այն՝ շրջանցելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, որը սահմանում է՝ *«Դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝ 2) նույն անձանց միջեւ, նույն առարկայի մասին եւ միեւնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ վճիռ»:* Ի դեպ, խնդրո առարկայի վերաբերյալ կա նաեւ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային վճիռը (ԵԿԴ/1060/02/09, 29.05.2013թ.), որը նույնպես անտեսել է դատավորը:

Գտնում ենք, որ Ա.Թումանյանը, միեւնույն գործը կրկին վարույթ ընդունելով, գերազանցել է օրենքով իրեն վերապահված լիազորությունները եւ հերթական անգամ խոչընդոտներ ստեղծել մեր մասնագիտական պարտականությունների կատարման ճանապարհին:

Ելնելով վերոգրյալից, խնդրում եմ քննության առարկա դարձնել դատավոր Ա.Թումանյանի վարքագիծը եւ հնարավորության սահմաններում նրան հեռու պահել Սյունիքի մարզին եւ մասնավորապես Կապան քաղաքին առնչվող հարցերը քննելու գործառույթից՝ նկատի ունենալով, որ նա մարզկենտրոնում Հայաստանի Հանրապետության շահերից վեր ունի այլ՝ անձնական եւ կլանային շահեր:

Հարգանքով՝
Սամվել Ալեքսանյան
«Սյունյաց երկիր» թերթի
գլխավոր խմբագիր
22 փետրվարի 2016թ.

Հինգ լաբորատորիա՝ Սյունիքի մարզում

Փետրվարի 23-ին Կապանի N2 ավագ դպրոցում, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղում եւ Կապանի համայնքային կենտրոնում բացվեցին ինժեներական լաբորատորիաներ՝ «Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության կողմից: Երեք հաստատությունում բացումը հանդիսավոր բնույթ էր կրում, օրվա խորհրդի առթիվ օրհնանքի խոսք ասաց Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը:

«Ինժեներական լաբորատորիաները, որ ներդրվում են Սյունիքի համայնքներում եւ հատկապես դպրոցներում, նպատակ ունեն ստեղծել միջավայր, որտեղ դպրոցականներն ու ուսանողները կհաղորդակցվեն նոր տեխնոլոգիաներին, ծրագրավորման, մեխանիկայի եւ էլեկտրոնիկայի ոլորտներում ձեռք կբերեն հմտություններ եւ ի վերջո ամենաժամանակակից կրթություն: Համոզված եմ, որ աշակերտների շարքերից կաճեն մասնագետներ, ովքեր մեծ պահանջարկ կունենան տեխնոլոգիական շուկայում, ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Կարծում եմ, որ Կապանում, հանքարդյունաբերությունից զատ, կստեղծվի նոր ուղղություն, որ ավելի հեռանկարային կլինի թ՛ւ համայնքի, թ՛ւ տարածաշրջանի, թ՛ւ մեր երկրի համար», – Կապանի N2 ավագ դպրոցում լաբորատորիայի բացումից հետո «Սյունյաց երկրին» փոխանցեց տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության փոխտնօրեն Հայկ Չոբանյանը:

«Կարծում եմ՝ սա մեծ իրադարձություն է՝ մանավանդ ինժեներական կադրեր պատրաստող հաստատությունում: Ինժեներական կրթությունը եւ նրա կիրառումը տնտեսության մեջ եւ բիզնեսում այն ճանապարհն է, որով պիտի անցնի մեր երկիրը, քանզի դրա ապագան ավելի քան խոստումնալից է: Իսկ այդ ամենի հիմքերը պիտի ստեղծել ցածրից՝ դպրոցից, այնուհետեւ շարունակել բուհական համակարգում, որպեսզի հետագայում մենք ունենանք բարձրակարգ մասնագետներ՝ ստեղծագործող, նախաձեռնող, ովքեր կարողանան իրենց բիզնեսը կազմակերպել հայրենի աշխարհում, որ տարագիր չդառնան, իրենց հացը վաստակեն հարազատ քաղաքում», – «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղում լաբորատորիայի պաշտոնական բացման ժամանակ ասաց կրթօջախի տնօրեն Լեռնիկ Պետրոսյանը:

Յուրաքանչյուր լաբորատորիայի հատկացված է ռոբոտային ուսումնական հավաքածու, շաղափային հաստոց եւ եռաչափ տպիչ: Այս վերջին երկուսը կառավարվում են համակարգչի միջոցով:

Փետրվարի 24-ին ինժեներական լաբորատորիաներ բացվեցին նաեւ Սիսիանի N2 հիմնական եւ N3 ավագ դպրոցներում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՀՀ զինված ուժերում սկսել է ուսումնական տարին, որ տեւելու է մինչեւ դեկտեմբերի վերջին շաբաթը

Հարցազրույց Սիսիանի զորամասի հրամանատար, գնդապետ Սմբատ Գրիգորյանի հետ

– Պարոն գնդապետ, փետրվարի 15-ին նշանավոր օր էր բանակի համար, զինվորական միտինգներով ու հանդիսավոր երթերով մեկնարկեց նոր ուսումնական տարվա առաջին փուլը: Ինչ ասել է՝ ուսումնական տարի զորքի, բանակի համար, ի՞նչ խնդիրներ են դրված այս ուսումնական տարվա շրջանակում, եւ ե՞րբ է ավարտվելու տարին:

– Ուսումնական տարվա առաջին փուլի մեկնարկով զորամասերում սկսվում են զինված ուժերի պատրաստության պլանով նախատեսված տեսական ու գործնական պարապմունքները, այս ամենի արդյունքում կրթվում է հայ զինվորը որպես հայրենիքի պաշտպան, կատարելագործվում են նրա գիտելիքներն ու հմտությունները, ամրապնդվում մարտունակությունը: Ուսումնական տարվա մեկնարկը տրվում է նախորդ տարվա արդյունքների ամփոփմամբ, ի մի են բերվում ձեռքբերումները, վերհանվում բացթողումները: Ուսումնական տարվան նախորդում է նախապատրաստական ժամանակաշրջանը, որի ընթացքում բանակը համալրվում է նոր զինվորներով, կարգի է բերվում ուսումնական բազան, ինչ զորամասին անհրաժեշտ է լինելու ուսումնական պրոցեսի ընթացքում: Ուսուցումը, որ փետրվարի 15-ից սկսվել է, հրատապ անհրաժեշտություն է բանակի համար: Այսօր մեծ հաշվով իրականացնում ենք երկու խնդիր՝ ուսուցում եւ սահմանների պահպանություն: Եթե ուսուցումը ձեւական բնույթ է կրում, դա վաղ թե ուշ բերելու է ձախողման: Մինչդեռ, այսօր բանակն իր առջեւ կարեւոր ու կոնկրետ խնդիրներ է դնում եւ լուծում: Եթե զինվորը դիպուկ է կրակում, հակառակորդին լռեցնում, դա միմիայն ուսուցման շնորհիվ է: Մենք անցած տարի առաջնագծի բարելավում ունեցանք մի այնպիսի տեղանքում, որ ուժերի հարաբերակցությունը փոխեց հօգուտ մեզ: Ցավոք սրտի, զոհ ունեցանք, բայց բազմապատիկ դժվարություններ պատճառեցինք մեզ խանգարող հակառակորդին: Դա հենց այնպես տեղի չունեցավ. զինվորին չես կարող ասել՝ գնա՝ կռվիր: Նրան պիտի նախապատրաստես, ասելս այն է, որ ուսուցումը մեր զինված ուժերի ամենակարեւոր բաղադրիչն է: ՀՀ զինված ուժերում սկսել է ուսումնական տարին, որ տեւելու է մինչեւ դեկտեմբերի վերջին շաբաթը՝ երկու փուլով:

– Որքանով տեղյակ ենք, նոր ուստարին ունի այլ շեշտադրում:

– Այդպես է, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով տարին հայտարարված է հրամանատարական պատրաստության տարի, որի ընթացքում կատարվելիք միջոցառումների ցանկը, դրանց խտությունը եւ բովանդակությունն այնպիսին են, որ, անշուշտ, դրական ազդեցություն են ունենալու հրամանատարների պատրաստության որակի բարձրացման վրա: Իսկ միայն պատրաստված հրամանատարն է կարող ենթականերին ուղղորդել ճիշտ ճանապարհով:

ԱՅՏԵԱՐԱ

Ծնվել է 1973թ. ապրիլի 29-ին Գյումրիում՝ մանկավարժների ընտանիքում: Ավարտել է Շիրազի անվան N36 միջնակարգ դպրոցը: Բարձրագույն կրթություն է ստացել հայկական գյուղատնտեսական ինստիտուտում, որն ավարտել է գերազանց առաջադիմությամբ: Սովորել եւ ավարտել է ՀՀ ՊՆ բարձրագույն բազմաբնույթ ուսումնարանը, համազորային մասնագիտությամբ: Զինվորական ծառայության է անցել որպես դասակի հրամանատար: 2004-2006թթ. սովորել է Մոսկվայի համազորային ակադեմիայում: Որպես զորամասի հրամանատար ղեկավարել է մայրաքաղաքային գունդը, Մարտակերտի 5-րդ պաշտպանական շրջանը, Ստեփանակերտի առանձին հրաձգային գունդը, իսկ այժմ Սիսիանի զորամասի հրամանատարն է: Ամուսնացած է, ունի երեք զավակ՝ մեկ դուստր, երկու որդի:

Մեր զորամասն էլ իր առջեւ խնդիր է դրել՝ սկսած ջոկի հրամանատարից, որ հրամանատարական կազմի ամենաստորին օղակն է, մի քանի կարգ բարձրացնել հրամանատարների դաշտային վարժվածությունը, նրանց մասնագիտական ունակությունները, հայրենասիրական ոգին: Պիտի ասեմ, որ մեր զորամասում կան բոլոր պայմանները հաջողություններ արձանագրելու համար: Արդեն իսկ անցած տարում ունեցանք լուրջ հաջողություններ եւ սահմանների ամրապնդման, եւ զինվորների բարոյահոգեբանական վիճակի ու մարտական ցուցանիշների բարելավման առումներով: Համոզված եմ, որ հրամանատարական պատրաստվածություն կոչվածն ըստ ամենայնի կյանքի է կոչվելու:

– Պարոն գնդապետ, Դուք, փաստորեն, պատասխանատու եք առաջնագծի մի զգալի հատվածի՝ Հայաստանի եւ Նախիջեւանի շփման գծի պահպանության համար: Կուզենայինք իմանալ, թե ինչպես եք գնահատում օպերատիվ իրավիճակը:

– Հակառակորդը քնած չէ, աշխատում է անընդհատ, հետեւում է մեր գործողություններին, մենք էլ նրան ճանաչում ենք շատ լավ, նրա բոլոր զորավարժությունները, նրա բոլոր մասշտաբային շարժերը, անգամ նրա օպերատիվ մարտավարական զորավարժությունների ժամանակ հիմնական ջանքերը:

Եվ միշտ, եւ անցյալ տարի փոխել ենք մեր որոշումները՝ կապված հակառակորդի վարքագծի հետ, նրա մեջ ուժեր եւ միջոցներ են ավելացել, նոր զորամասեր են կազմավորվել, բնականաբար, մեր ջանքերի ուղղությունը վերանայում ենք: Միանշանակ նախաձեռնությունը մեր ձեռքում է, դա կյանքն է ցույց տալիս, դա ամիսներն ու տարիներն են ցույց տալիս, հայը լեռներ բարձրացող ժողովուրդ է, լեռ սիրող ժողովուրդ է, լեռան վրա չես կարող հային հաղթել, հարթավայրում միգուցե, բայց լեռներում հայի հետ կռվելը շատ դժվար է, դա եկել է մեր պատմության խորքերից, քչով շատի դեմ պայքարելու ունակությունից, դեռեւս մեր ամենաուժեղ ռեսուրսը՝ կանայք չեն ներգրավվել: Եթե դա էլ տեղի ունենա, հակառակորդն այստեղ խաղ չունի: Պատմությունն ապացուցել է, որ տարբեր ազգեր ու քոչվոր ցեղեր եկան ու գնացին հողմերի պես, իսկ մենք մեր լեռների պես մնացինք ամուր ու կանգուն:

Այսօր լեռներում մեզ հետ խոսել ուժի լեզվով հակառակորդի մտքով էլ չի անցնում: Նախաձեռնությունը մեր կողմում է, մեր զինվորը մի տեսակ կպած է լեռանը, սիրում է լեռը: Մեր զինվորները հաճույքով են լեռները մագլցում, ոնց որ հարթավայրում քայլելիս լինեն:

Դա քարերին ու ժայռերին կպած մեր ժողովրդի գենն է: Մենք էլ կորպուսի հրամանատարի հետ, երբ գնում ենք դիրքերը, նստում ենք մի քարի վրա՝ 3000 մետրից բարձր տեղանքում, որտեղ օդն է նոսր, շնչելը՝ դժվար, բայց կարծես «հյուրանոցային» վիճակում լինենք:

– Դուք, բնականաբար, կարող եք գաղտնիքներ չասել. կա կարծիք, որ նախիջեւանյան սահմանագծի որոշ հատվածներում հակառակորդը մեր տարածքում էր գտնվում՝ պայմանավորված ձմեռային եղանակով, նման խնդիրներ կա՞ն:

– Իմ ծառայության շրջանում չի եղել դեպք, որ հակառակորդն առաջ գա, եւ դա նրան հաջողվի: Փորձել է մի անգամ եւ խուճապահար փախել է՝ թողնելով իր հետքերը՝ պարկեր, համազգեստի կտորներ: Չէ, չի ստացվելու:

– Կարելի՞ է ասել, որ պետական սահմանը շատ հուսալի պահպանվում է:

– Պետական սահման չասենք, քանի որ Ադրբեջանի հետ սահման չունենք, այլ ունենք շփման գիծ, որը որեւէ պետություն չի ընդունել որպես պետական սահման դիվանագիտական մակարդակով: Այդ շփման գիծը չի համընկնում խորհրդային շրջանում գծված սահմանների հետ՝ ոչ արեւելյան, ոչ արեւմտյան ուղղություններում, բայց կարծես կայունացել է եւ ընկալվում է որպես պետական սահման: Ամրապնդում ենք այդ սահմանը՝ գիտակցելով, որ դա օդ ու ջրի պես անհրաժեշտ է, քանզի մեր թիկունքում մեր գյուղերն են, մանուկներն ու ծերերն են, մեր սրբությունները են, մեր գերեզմանները. հաստատվում ենք ժայռերի մեջ, առավելագույնս ստեղծում բարենպաստ պայմաններ՝ հնարավոր մարտական գործողությունների ժամանակ ավելի նպաստավոր դիրք ունենալու համար: Դա գիտակցում ենք եւ ամեն օր աշխատում այդ ուղղությամբ: Կարծում եմ՝ նոր բան չասացի, դա գիտի ժողովուրդը՝ սահմանին ապրող գյուղացին, գիտի մեր զինվորը, ով փոքրիկ բահն առած անընդհատ փորում է՝ իր համար խրամատ ստեղծելով:

– Պարոն գնդապետ, պատահո՞ւմ է՝ ծառայության բերումով կամ կրիտիկական պահերին խնդիրներ առաջանալու դեպքում շփում ունենաք (նաեւ հեռակապի) միջոցով հակառակորդի հրամանատարության հետ:

– Այդպիսի գործառույթներ ես չունեմ: Ինձ իրավունք վերապահված չէ շփում ունենալ հակառակորդի հրամանատարական կազմի հետ: Դա վերադասի իրավասությունների մեջ է մտնում: Միգուցե փոխվի իրավիճակը, այդպիսի խնդիր ինձ առաջադրվի. միանշանակ պատրաստ եմ, մանավանդ որ փորձ ունեմ նման շփման՝ ԵԱՀԿ միջնորդական առաքելության հետ միասին, երբ ծառայում էի արեւելյան ուղղության զորքում: Խնդիր չեմ տեսնում, լավ տիրապետում եմ ռուսերենին, բայց դրա կարիքը չկա: Որովհետեւ հակառակորդի հետ մենք գիտենք, թե ինչ լեզվով պիտի խոսենք. նա մնում է նույն կենսաբանական թուրքը՝ խաբելով, համոզելով, իր դավադիր քայլերով: Նրա փողկապավոր տեսքին պետք չէ խաբվել: Նա նույն թուրքն է, որ եղել է դարերով…

– Գարնանը, երբ Նախիջեւանի հետ շփման գծում դիրքային բարելավում է եղել, ցավոք, նաեւ մեկ զոհ ունեցանք, եթե չենք սխալվում՝ Անգեղակոթից:

– Այո, այդ ժամանակ հակառակորդի դիպուկահարի կրակից զոհվեց պայմանագրային զինծառայող Արման Եփրեմյանը: Զոհվածի ընտանիքին մշտապես օգնում ենք, նրա ծնողներն իմ աշխատասենյակի տեղը լավ գիտեն, Անգեղակոթի գյուղապետն էլ ուշադիր է զոհվածի ընտանիքի հանդեպ, տեղյակ եմ: Երեկ էլ նրա ծնողներն այստեղ էին, քննարկեցինք գերեզմանաքարի տեղադրման հետ կապված հարցը: Բարոյական արժեքներ կան, որոնք պիտի պահպանենք, քանզի բոլորս էլ զինծառայող ենք, եւ զոհվելու հավանականությունը մեր մասնագիտության ելքերից մեկն է: Առաջինը կրակը մենք ենք վերցնում մեզ վրա, որ ժողովուրդը պատրաստ լինի պատերազմի հետագա զարգացումներին:

– Ադրբեջանի ամենաբարձր ղեկավարության կողմից օրավուր ածում է պատերազմի հռետորաբանությունը: Սպառնալիքներ են հնչում մեր ազգի հասցեին, նաեւ նրա մեծ եղբոր՝ Թուրքիայի կողմից: Այդ ամենն ինչպե՞ս է ընկալվում զինվորականության կողմից:

– Դրանք բամբասանքի ոլորտից են: Մարտական գործողություններին պատրաստվող եւ պատրաստ պետությունը չէր կարող բացահայտ խոսել իր ծրագրերի, մտադրությունների մասին: Ես այդպես եմ կարծում: Հակառակորդ կողմը գիտի, որ իր ձախողվելու հավանականությունը շատ մեծ է: Աստված մի արասցե, եթե պատերազմ լինի, այդ հռետորաբանությանը վերջ կտրվի, կտրվի սպառնալիքների լեզվով խոսելու երեւույթի վերջնական գնահատականը: Դրանում ես համոզված եմ ուղղակի: Մենք շփման գծում թշնամուց հեռու ենք 500-700 մետր, երբեմն ավելի մոտ, տեսանելի է նրանց առօրյան, իսկ դրանով շատ-շատ բան կարելի է եզրակացնել: Շուուներ են կազմակերպում, զորահանդեսներ են անցկացնում, այդ ամենը եւ պատերազմը վերսկսելու սպառնալիքները ներքին սպառման համար են, իսկ իրական կյանքը խրամատում է, թող գնան եւ խրամատում նկարահանեն, թե ինչ է կատարվում, տեսնեն, թե ինչ զգվռտոցներ կան իրենց զինվորների շրջանում: Կրակում են իրար վրա, շատ վախկոտ են, ինչ ասեմ՝ ժամանակն ամենամեծ դատավորն է, ամեն ինչ իր տեղը կդնի:

– Ավարտվեց ձմեռային զորակոչը, հանրապետության զինված ուժերում սերնդափոխություն տեղի ունեցավ, ինչպե՞ս եք գնահատում նորակոչիկների ֆիզիկական պատրաստականությունն ու կրթական մակարդակը:

– Հաճելիորեն պիտի փաստեմ, որ նոր համալրված անձնակազմն ավելի ամրակազմ է, կրթական մակարդակը չէի ասի, որ զիջում է նախորդ տարիների զինակոչիկների մակարդակին, ընդհակառակը, նոր-երն ավելի շրջահայաց են՝ հակված դեպի բարձր տեխնոլոգիաները, ավելի գրագետ են արտահայտվում, բարեկիրթ են: Բայց պատանուց զինվոր պատրաստելն ընթացք է, որ տեւում է ամիսներ: Հոգեբանական եւ ֆիզիկական առումներով 18-ամյա երիտասարդն ինտեգրվում է բանակային կյանքին: Նորակոչիկներին ընդունելիս նրանց միանգամից խիստ ռեժիմի մեջ չենք պահում, որ հոգեկան ցնցումներ չունենան, աստիճանաբար նրանց հետ աշխատելով, բացատրելով՝ ինչ է զինվորական կյանքը, միջանձնային նոր հարաբերությունները, ինչ իրավունքներ ու պարտականություններ ունեն նրանք բանակային կյանքում եւ այլն, եւ այլն: Մենք շտապելու տեղ չունենք, մի ամիսը բավարար է, որ երիտասարդն «ընկղմվի» զորամասի կենցաղի մեջ: Սատանայի ականջը խուլ. չունենք առողջական լուրջ բարդություններ ունեցող զինվորներ: Որոշակի առողջական խնդիրներ ունեցողները բժիշկների հսկողության ներքո են, զորամասում առկա է բժշկական ծառայության հմուտ թիմ, փորձառու են, եւ գոհ եմ նրանցից ու շնորհակալ, քանզի իմ մեջքին կանգնած են: 20 տարի է, ինչ շփվում եմ զինվորների հետ, նայելով նրանց աչքերին, անսխալ գիտեմ՝ ով ով է, բայց նրանց առողջական վիճակը գնահատել չեմ կարող, դա որոշում է բժիշկը:

– Պարոն Գրիգորյան, վերջին ժամանակներս հաճախ ենք հանդիպում, հրամանատարների հետ հարցազրույցներ ունենում: Մի հարց միշտ բոլորին եմ ուղղում՝ առնչվող զինվորների միջանձնային հարաբերություններին: Խորհրդային բանակում, օրինակ, տարածում ուներ «դեդովշչինա» կոչվող արատավոր երեւույթը, երբ ստաժավոր ծառայողներն իրենց կամքն էին թելադրում նորակոչիկներին, նրանց ստիպում ինչ-ինչ աշխատանքներ կատարել:

– Մեր բանակի սկզբնավորման օրվանից «դեդովշչինա» չի եղել ու չկա: Փոքր ազգերի բանակում «դեդովշչինա» չի կարող լինել: Դա մեծ երկրների բանակին հատուկ երեւույթ է: Մեր բանակում այդ արատավոր երեւույթը չկա, որովհետեւ փոքր ազգ ենք, որովհետեւ զինվորների մեծ մասը ճանաչում է իրար, փողոցից են ճանաչում, քաղաքացիական կյանքից են ճանաչում, սպաներն են միմյանց ճանաչում: Փառք Աստծո, որ խորհրդային բանակից այդ երեւույթը չտարածվեց մեր բանակում, քանզի չափազանց վատ երեւույթ է, դա մարդուն ստորացնելու, ծաղրուծանակի ենթարկելու մի ձեւ է:

– Իսկ տեղային գործոնը եւս դե՞ր չի խաղում, ասենք, զինվորների մի ստվար խումբ Երեւանից լինի եւ փորձեն եղանակ ստեղծել:

– Երբ բանակը նոր էր ձեւավորվում 1992 թվականին, երբ սկզբնական շրջանում զորակոչվում էին տարբեր տարիքի զինակոչիկներ, լինում էր այնպես, երբ 18 տարեկանը ծառայում էր 25 տարեկանի հետ, ինչ-որ չափով տեղայնացման խնդիր կար, երեւանցիներ, գյումրեցիներ, վանաձորցիներ, հիմնական խմբերը սրանք էին,

պայքարում էին իրար դեմ, բայց հիմա այդ երեւույթի հեռավոր արձագանքը չկա: Նման խնդիրներ այլեւս չկան: Մեզ հիմա ուսուցման խնդիրն է հետաքրքրում: Զինվորի սննդի, համազգեստի եւ այլ կենցաղային խնդիրներն այլեւս անցյալում են:

– Իսկ ինչպե՞ս է ապահովվում կապը զինվորների ծնողների հետ, կուզեինք ներկայացնել բանակ-հասարակություն կապը:

– Բանակի եւ հասարակության մեջ սերտ կապ կա, դրանով այսօր ոչ մեկին չես զարմացնի: Նաեւ կուզեի նշել տեղացիների վերաբերմունքը զորամասի հանդեպ: Սիսիանի ժողովուրդը շատ բարեամբույր է՝ հյուրին, այլ վայրից եկածին ընդունող, հարգող: Սիսիանում միայն բարի վերաբերմունք եմ տեսել: Իսկ ծնողների հետ կապված, կասեմ, որ նրանց զորամաս այցելելիս, զինվորին որոշակի ժամանակով ազատում ենք՝ ծնողների հետ լինելու, հաղորդակցվելու նրանց հետ: Այդպիսի բան չկա, որ ծնողը գա եւ մի երկու ժամ սպասի: Զինվորի ծննդյան օրը նրան անպատճառ ազատ ենք արձակում՝ անկախ նրա կարգապահության վիճակից, ճաշից հետո նրան հատկացվում է արձակում, ասում եմ գնա, ման եկ, դա քո օրն է, ծննդյանդ օրն է: Նման փոքրիկ վերաբերմունքի նշաններ ենք ցույց տալիս:

– Մի քանի խոսք պայմանագրային հիմունքներով ծառայողների մասին: Որքա՞ն է նրանց տեսակարար կշիռը ձեր զորամասում:

– Մեր զորամասի կեսից ավելին պայմանագրային զինծառայողներ են: Սա նոր միջավայր է, նոր աշխատանքի ձեւ է, ինչը մենք տակավին ընկալում եւ յուրացնում ենք, փորձում ենք կատարելագործել: Պայմանագրայինների հանդեպ նույն մեխանիզմը չի գործում, ինչ պարտադիր զինծառայողների դեպքում, պայմանագրային զինծառայողների պատրաստման, նրանց հետ աշխատանքի, ուսուցման, փոխհարաբերությունների մասով նոր մեթոդներ են անհրաժեշտ: Պայմանագրային զինծառայողի՝ բանակում ծառայելով հասարակությունն ավելի է ներգրավվում բանակային կյանքի մեջ, քանզի զինծառայողը սոցիալական տարբեր շերտեր է ներկայացնում, ընտանիքներ ունեն, քո գործունեությունն այնպես պիտի կառուցես, որ հանկարծ նրա ընտանիքը չտուժի, գյուղատնտեսական աշխատանքներ են կատարում, ծառայությունն այնպես պիտի կազմակերպես, որ մարդիկ իրենց եկամուտից չզրկվեն: Դա լուրջ խնդիր է, եւ պիտի հրամանատարը տեղում տվյալ օրը, տվյալ ժամանակաշրջանում ընդունի որոշումներ, որ մարդու բերքը ծառայության պատճառով չհավաքված չմնա: Փառք Աստծո, նման խնդիրներ չեն առաջացել:

– Ցանկացողներ, կարծեք, շատ են, չէ՞, պայմանագրային հիմունքներով ծառայելու համար:

– Շատանում են: Դա մի քանի գործոնով է պայմանավորված: Արտագնա աշխատանքի հետ կապված որոշակի խնդիրներ են ծագել: Բանակի դերն է բարձրացել հասարակության մեջ, պետականության կայացման գաղափարախոսության մեջ կա այդ միտումը, զինվոր դառնալու մղումն է շատացել: Հասարակության մեջ բանակի դերը մի քանի անգամ բարձրացել է, պատճառը դա է, որ պայմանագրայինները գալիս են անգամ Հայաստանի մյուս տարածաշրջաններից, նույնիսկ ԼՂՀ-ից, Գյումրուց, Արմավիրից եւ այլն:

– Իսկ նրանց մարտական եւ ֆիզիկական պատրաստականությունն այլ հարթության վրա՞ են՝ համեմատ պարտադիր ծառայության զինվորների:

– Նախ՝ մենք ցանկացողներին ուզում ենք ներգրավել զինծառայության մեջ, ընդունելիս խիստ պահանջներ չենք առաջադրում, ադապտացիոն ժամանակ ենք տալիս, հենց սկզբից խիստ նորմատիվային պահանջներ չենք դնում նրանց առջեւ: Կարեւորն այն է, որ նա լինի խոստումնալից, լինի հայրենասեր, չունենա արատավոր բարքեր, հակում չունենա ոգելից խմիչքների հանդեպ, չունենա քրեական անցյալ, այդպիսի չափանիշներ կան: Ինչ վերաբերում է ֆիզիկական պատրաստականությանը, այդ խնդրին անդրադառնում ենք ծառայության առաջին ամիսներին:

– Երբ մոտենում էինք զորամասին, նկատեցինք կայանված մեքենաներ, մեզ համար պարզ դարձավ, որ զորամասն իր հիմնական առաքելությունից զատ, սոցիալական մեծ խնդիր է լուծում՝ մարդկանց զբաղվածության հետ կապված:

– Մոտ հազար մարդ զորամասում աշխատանք ունի միայն Սիսիանի տարածաշրջանից: Երկու հիմնական խնդիր ենք լուծում՝ սոցիալական եւ հայրենիքի պաշտպանության: Պայմանագրայիններն այդպես էլ ասում են՝ ընտանիք ենք կերակրում եւ պահում ենք մեր երկիրը: Սրանք նաեւ տղամարդու հիմնական առաքելություններն են՝ երկիր պահել եւ ընտանիք պահել:

– Ավանդական մի հարց. ի՞նչ կփոխանցեիք ձեր զինվորների ծնողներին:

– Ծնողներին կխնդրեի դեռեւս նախազինակոչային տարիքից իրենց որդուն պատրաստել ծառայության, հետեւել նրա առողջական վիճակին: Զինվորների ծնողներին ցանկանում եմ առողջություն, թող շատ տղաներ ունենան, եւ շարունակաբար բանակին տան: Երկու տարին իրենց որդիների՝ որպես տղամարդ դառնալու, որպես երկրի քաղաքացի կայանալու տարիներ են: Մարդու կյանքում ոչ մի ժամանակահատվածում այդքան դրական փոփոխություններ չեն լինում, որքան զինվորական ծառայության երկու տարում: Ծնողից նրանց «ժառանգում» ենք պատանի տարիքում, մանկական աչքերով, տղամարդ դարձած վերադարձնում ենք նրանց, ավելի առնականացած, ավելի ուժեղ, ավելի ինքնավստահ եւ ավելի հայրենասեր: Մենք լավ զորահավաքային ռեսուրս ունենք, մենք արդեն 20 տարի զինվոր ենք զորացրում, նրանք պատրաստի զինվորներ են արդեն: Դա լուրջ ռեսուրս է պատերազմական իրավիճակում մեր շարքերը համալրելու առումով, եւ դա շարունակական բնույթ է կրում:

– Պարոն հրամանատար, հարցերի լայն շրջանակ քննարկվեց մեր զրույցի ընթացքում, ի՞նչ կավելացնեիք ասվածին որպես ամփոփում:

– Եկեք հրամանատարին ներկայացնելու, զինվորին ներկայացնելու սովորույթից դուրս գանք: Մի անգամ էլ մտնենք սպայի ընտանիք, որտեղ ծնվում են հրամանատարները եւ դառնում գնդապետ: Եթե ասում ենք՝ հրամանատարական պատրաստման տարի է, հրամանատարը, նախեւառաջ, պատրաստվում է տանը: Ընտանիքի դերը սպայի կայացման գործում, հավատացեք, շատ-շատ մեծ է եւ անփոխարինելի: Ընտանիք, որ սպայի ծառայության բնույթով պայմանավորված, «դեգերումների» մեջ է: Անձնական օրինակով ասեմ. երեխաներիցս մեկը ծնվել է Ստեփանակերտում, մյուսը՝ Մոսկվայում, երրորդը՝ Երեւանում: Թող կարծիք հայտնեն սպայի կանայք, որովհետեւ ընտանիքի ծանրության բեռը նրանց ուսերին է: Թող մի անգամ էլ ձեր թերթի էջերում լուսաբանվի սպայի ընտանիքը:

Զրույցը՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Էլեկտրական սարքավորումների հրդեհավտանգությունը

Խորհրդատվություն

ԱՆԴՐԱՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Սյունիքի մարզային հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչության հաշվառման, վերլուծության եւ քարոզչության բաժնի պետ

Փորձը ցույց է տալիս, որ արձանագրված հրդեհների զգալի մասը տեղի է ունենում էլեկտրասարքավորումների կամ էլեկտրալարերի շահագործման կանոնների խախտման հետեւանքով:

Էլեկտրասարքավորումները պետք է մոնտաժվեն եւ շահագործվեն համաձայն էլեկտրական սարքավորումների տեղակայման կանոնների:

Էլեկտրաշարժիչները, ղեկավարման, կառավարման, վերահսկիչ-չափիչ պաշտպանական սարքերը, օժանդակ սարքավորումները եւ հաղորդալարերը պետք է ունենան անհրաժեշտ պաշտպանության աստիճան եւ կատարում՝ համապատասխանեն էլեկտրական սարքավորումների տեղակայման կանոններին, ինչպես նաեւ ունենան կարճ միացումից եւ գերբեռնվածությունից պաշտպանող եւ էլեկտրամատակարարման պահանջվող հուսալիություն ապահովող սարքեր:

Չի թույլատրվում անցկացնել օդային էլեկտրահաղորդման գծեր եւ արտաքին էլեկտրագծեր հրդեհավտանգ հիմնատարրերով տանիքների, ծածկակտուրների եւ այրվող նյութերի բաց պահեստների վրայով: Այդ օբյեկտները սնուցող գծերի հենասյունը պետք է այնպես տեղադրել, որ գծերի եւ շինությունների միջեւ եղած հեռավորությունը լինի առնվազն 1,5 մետր: Էլեկտրասարքավորումների շահագործման ժամանակ չի թույլատրվում.

1) օգտագործել սարքեր եւ սարքավորումներ, երբ շահագործման պայմանները չեն համապատասխանում արտադրող կազմակերպությունների երաշխիքներին, ինչպես նաեւ անսարքությունների դեպքում, որոնք կարող են հրդեհի պատճառ դառնալ,
2) շահագործել վնասված մեկուսացումով (մեկուսիչ հատկությունները կորցրած) մալուխներ եւ էլեկտրալարեր,
3) օգտվել անսարք վարդակներից, անջատիչներից եւ այլ տիպի էլեկտրական հարմարանքներից եւ սարքերից,
4) էլեկտրալամպերը կամ ջահերը փաթաթել թղթով կամ այլ այրվող նյութերով,
5) առանց չայրվող նյութից պատրաստված տակդիրի օգտագործել էլեկտրական արդուկներ, սալօջախներ,
6) առանց հսկողության թողնել ցանցին միացված էլեկտրաջեռուցիչ սարքեր, հեռուստացույցներ, ռադիոընդունիչներ եւ այլ սպառիչներ, եթե դա արգելված է արտադրող կազմակերպության կողմից,
7) օգտագործել ոչ ստանդարտ (տնայնագործական) էլեկտրաջեռուցիչ սարքեր, ներդիրներ, այլ սարքեր՝ գերբեռնվածության եւ կարճ միացման հոսանքներից պաշտպանելու համար,
8) պահեստներով, արտադրական եւ այլ նշանակության շինություններով տարանցիկ հաղորդալարերի եւ մալուխների անցկացումը:

Չի թույլատրվում մեկ խողովակում, մետաղական ճկախողովակում, լարերի փնջում, շինարարական կառուցվածքների փակ անցուղիներում համատեղ տեղադրել աշխատանքային եւ վթարային լուսավորության շղթաների սնման եւ կառավարման մալուխներ:

«Ելք» լուսային ցուցանակները պետք է գտնվեն սարքին վիճակում եւ միշտ միացված լինեն: Հանդիսասրահներում, ցուցասրահներում, ցուցահանդեսային սրահներում դրանք կարող են միացվել միայն միջոցառումների անցկացման ժամանակ:

Շարժական էլեկտրալուսատուների համար պետք է օգտագործվեն ճկուն հաղորդագծեր, եւ դրանք պետք է սարքավորված լինեն ապակե թասակներով, պաշտպանված լինեն պահպանիչ ցանցերով եւ ապահովված լինեն կեռիկներով:

Լամպաշարերի պատրաստման ժամանակ՝

1) անհրաժեշտ է օգտագործել միայն չայրվող նյութեր, իսկ դրանց իրանները պետք է մեկուսացվեն պահիչ պողպատաճոպանից,

2) լուսարձակները եւ լամպաշարերը պետք է տեղադրվեն այնպես, որ մինչեւ այրվող նյութից պատրաստված կառուցվածքները եւ իրերն ընկած հեռավորությունը լինի 0.5 մ-ից, իսկ ոսպնյակային լուսարձակների տեղադրման տեղերից՝ 2 մ-ից ոչ պակաս,

3) լուսարձակների, լամպաշարերի լուսազտիչները պետք է լինեն չայրվող նյութերից:

Էլեկտրավառարաններն առանց ջերմակարգավորիչների չի թույլատրվում օգտագործել:

Պետք է հետեւել մալուխների, հաղորդալարերի, էլեկտրաշարժիչների, լուսատուների եւ այլ էլեկտրասարքավորումների ճիշտ ընտրությանը եւ շահագործմանը, կախված շինության հրդեհապայթունավտանգության դասից եւ շրջակա միջավայրի պայմաններից:

Էլեկտրացանցի գերբեռնվածությունից, կարճ միացումից, ինչպես նաեւ այլ վթարային ռեժիմներից ծագող հրդեհների կանխման նպատակով պետք է պարբերաբար հսկողություն սահմանել էլեկտրասարքավորումների տեխնիկական վիճակի վրա:

Անցումային դիմադրությունները նվազեցնելու նպատակով հաղորդալարերի կցամիացումներն անհրաժեշտ է իրականացնել հատուկ սեղմակների միջոցով, ինչպես նաեւ եռակցման կամ զոդման եղանակով:

Մի հուշարձանի պատմություն

Այս հոդվածի համառոտ տարբերակը պատրաստվել էր «Комсомольская правда» լրագրի ռուս ընթերցողի եւ Ռուսաստանի Դաշնությունում բնակվող հարյուր հազարավոր մեր հայրենակիցների համար, սակայն հետո մտածեցինք այս մասին պատմել նաեւ «Այունյաց երկրի» ընթերցողներին:

Հայրենական մեծ պատերազմի ռումբերն ու ականներն իմ հայրենիքում՝ Հայաստանում չեն պայթել, բայց այստեղ էլ չկա մեծ ու փոքր մի բնակավայր, մի տուն ու ընտանիք, որ զգացած չլինի պատերազմի չարագուշակ շունչը, տեսած չլինի նրա բերած ավերն ու սովը:

Մեկուկես միլիոն բնակչություն ունեցող հանրապետությունից եւ Խորհրդային Միության տարբեր հանրապետություններում բնակվող հայորդիներից 650.000-ը մեկնեց ռազմաճակատ: Նրանցից 106-ն արժանացավ Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման, 27-ը դարձավ Հայրենական պատերազմի փառքի երեք աստիճանի շքանշանի ասպետ, 67-ը կրում էր գեներալի, 2-ը՝ մարշալի կամ ծովակալի ուսադիր, հետագայում գեներալների թիվն ավելացավ 20-ով, իսկ մարշալներինը՝ եւս 2-ով, 350.000-ի համար էլ հայրենիքը, նրանց հարազատները սեւ թուղթ ստացան (https://ru.wikipedia.org/wiki/Вторая мировая война): Նրանց մասին ասում են՝ վերադաձան հուշարձան դարձած: Հավանաբար նախկին Խորհրդային Միության տարածքում չկա մի բնակավայր, որտեղ նրանց հիշատակին հուշարձան կառուցված չլինի: Այդպես է նաեւ մեզ մոտ՝ Հայաստանում, որտեղ եւս դրանց նկատմամբ հոգատարությունը երբեք չի խամրում: Նրանք ապրողներիս մշտապես հիշեցնում են, որ այսօրվա կյանքի համար պարտական ենք զոհվածներին:

Տողերիս հեղինակը ծանոթ է Գորիսի տարածաշրջանի բոլոր բնակավայրերի հուշարձաններին: Դրանք, որպես կանոն, կառուցվել են բնակավայրերի (գյուղերի) մուտքերի (ելքերի) մոտ: Ասել է թե՝ կառուցվել են այն վայրերում, որտեղից հարազատները, համագյուղացիներն իրենց սիրելիներին ճանապարհել են ռազմաճակատ: Բնական է, որ հաղթանակով վերադարձածներին էլ դիմավորել են հենց գյուղերի մուտքերի մոտ: Կան հազվագյուտ բացառություններ, որոնցից մեկն էլ հայրենի Գորիս քաղաքի կենտրոնում կառուցված աղբյուր-հուշարձանն է: Այս հուշարձանը շատ ինքնատիպ է, այդ պատճառով էլ ցանկանում եմ նրա մասին պատմել: Առաջինը, որ այն յուրահատուկ հաղթական կամար է՝ իր երկու կամարով՝ դառնալով քաղաքիս կենտրոնական զբոսայգու համար յուրատեսակ դարպաս: Կանխավ գիտեինք, որ հուշարձանի հեղինակը Հայաստանի վաստակավոր եւ ԽՍՀՄ ժողովրդական ճարտարապետ, բազմաթիվ նման կոթողների հեղինակ Ռաֆայել Իսրայելյանն է: Հայաստանի պետական արխիվում փորձեցինք ավելին իմանալ հուշարձանի ստեղծման պատմության մասին, բայց դժբախտաբար փաստերը չափազանց սուղ էին: Մեզ հաջողվեց միայն իմանալ, որ Իսրայելյանի

էջ 7

Աղիտու-3 քարայրը կմնա որպես վերին պալեոլիթյան դասական հուշարձան

2009 թվականից հայ-գերմանական համատեղ արշավախումբը հնագիտական պեղումներ է իրականացնում Սիսիանի Աղիտու-3 քարայրում, որ հնագիտության համար բավական հետաքրքիր բացահայտում է: Հայկական կողմից աշխատանքներն իրականացնում է ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտը՝ հնագետ Բորիս Գասպարյանի, իսկ գերմանական կողմից՝ Թյուբինգենի համալսարանը՝ պրոֆեսոր էնդրյու Քենդլի ղեկավարությամբ: «Որոտան պրոյեկտ» ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների նպատակն է բացահայտել Որոտանի կիրճում գտնվող քարեդարյան հուշարձանները եւ ուսումնասիրել դրանք: Հավանաբար այդ ուսումնասիրությունները կշարունակվեն տասնամյակներ շարունակ:

Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, արշավախմբի հայկական կողմի ղեկավար Բորիս Գասպարյանը բարձր գնահատեց Աղիտու-3 քարայրի արժեքը՝ կետ առ կետ հիմնավորելով վերջինիս բացահայտման կարեւորությունը:

Սյունիքի բարձրավանդակը Հայաստանի մյուս աշխարհագրական շրջաններից շատ է տարբերվում իր ռելիեֆով, լանդշաֆտով, հրաբխականությամբ, ինչը հնարավորություն է տվել մարդուն ե՛ւ հազարամյակներ առաջ, ե՛ւ այսօր այստեղ գործունեություն ծավալել:

Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ Աղիտու-3 քարայրը Սյունիքի բարձրավանդակում հայտնաբերված առաջին պալեոլիթյան հուշարձանն է, երրորդ՝ այն Հայաստանում հայտնաբերված առաջին վերին պալեոլիթյան, քարայրային շերտագրված հուշարձանն է: Չորրորդ՝ այն իր տիպի հուշարձանների մեջ ցույց է տալիս անատոմիապես ժամանակակից մարդու ներթափանցումը Հայկական լեռնաշխարհի գոնե թե այդ բարձրադիր հատվածները: Մինչ այդ այդպիսի հուշարձան Հայկական լեռնաշխարհում չէր հայտնաբերվել:

Աղիտու-3 քարայրը ոչ մեծ չափերի քարայր է, որը մարդը պարբերաբար գործածել է որպես կացարան. ռադիոածխածնային վերլուծությունները թույլ են տալիս հուշարձանը հասակագրել մեզանից 40 հազարից մինչեւ 23 հազար տարվա վաղեմություն: *«Ցավոք, վերին շերտը պահպանված չէ, որովհետեւ խորհրդային շրջանում այստեղ ռեստորան են փորձել կառուցել, ավիրել են նաեւ կոլխոզի ժամանակ: Քարայրը հետաքրքիր է նաեւ նրանով, որ, բացի պալեոլիթյան հուշարձան լինելուց, այդտեղ պեղումների շնորհիվ բացել ենք հետաքրքիր անտիկ դամբարան. քարայրում նման թաղումն արտակարգ երեւույթ է եւ հավանաբար ծիսական բնույթ ունի: Իհարկե, այս ամենը դեռեւս ուսումնասիրության փուլում է»,* – նշեց արշավախմբի ղեկավարը:

Հնագետի տեղեկացմամբ՝ սա լավ պահպանված առաջնակարգ հուշարձան է, որովհետեւ շերտերում հանդիպում են ոչ միայն վերին պալեոլիթյան շրջանի քարե գործիքներ, այլեւ կենդանաբանական, միկրոկենդանաբանական մնացորդներ, ոսկորից գործիքներ, նույնիսկ ծովախխունջներից շարան: Վերջինս թույլ է տալիս ենթադրել Պարսից ծոցի տարածքի բնակչության հետ կապերի մասին: *«Սա ցույց է տալիս homo sapiens-ի՝ ժամանակակից մարդու ներթափանցումը Հայկական լեռնաշխարհ: Չափազանց կարեւոր մի իրողություն, քանի որ Իրանում, Իրաքում, Վրաստանում այդպիսի հուշարձաններ կային եւ հանելուկային էր, որ մինչ այս Հայաստանում նմանատիպ հուշարձան հայտնաբերված չէր: Աղիտու-3 քարայրը, կարծեք, մի հենակետ էր, որը լրացրեց, նաեւ բացահայտեց հարեւան երկրների հետ կապերը»,* – նշեց Բ.Գասպարյանը:

Հարեւան երկրների նմանատիպ քարայրերը կարստային (կրաքարային) ծագում ունեն, իսկ Աղիտու-3 քարայրի պեղումները պարզեցին, որ մարդն այստեղ փոփոխական միջավայր է մտել. քարայրի շերտերում նկատվում են հրաբխային մոխիր, փլուզվածքներ, որոնք հավանաբար կապված են հրաբխային եւ երկրաշարժային ակտիվության հետ: Այստեղ մասնագետները գործ ունեն բավական բարձր տեղադրված քարայրի հետ եւ պիտի հասկանալ, թե ինչն է պատճառը, որ մարդը հարթավայրից հանկարծ հասել է այդ ցուրտ միջավայր:

Բորիս Գասպարյանի հավաստմամբ՝ մարդու այստեղ հայտնվելը մի քանի պատճառ կարող է ունենալ. նախ՝ հումքային ստրատեգիան: Սյունիքի բարձրավանդակում գտնվում են վանակատի կամ օբսիդիանի հարուստ պաշարներ, որ ունի համառեգիոնալ նշանակություն: Փաստերը ցույց են տալիս, որ այստեղի վանակատը հասել է մինչեւ Ուկրաինա, Եվրոպա: Երկրորդ պատճառը հավանաբար Սյունիքի հարուստ կենդանական, բուսական աշխարհն է, որի բազմազանության համար նաեւ հրաբխային մոխիրն է նպաստավոր պայմաններ ստեղծել: Երրորդ գործոնն այն է, որ հավանաբար քարայրի առաջ ճահճային-սառցադաշտային լճակ է եղել, որի սառույցը, ամռանը հալվելով, իդեալական պայմաններ է ստեղծել թռչունների, մանր կենդանիների եւ կաթնասունների համար: Մարդը, տեղավորվելով այստեղ, նախեւառաջ զբաղվել է որսորդությամբ: Այսինքն՝ այս բարձրադիր գոտում մարդուն գրավող մի քանի գործոններ են եղել:

Մասնագետների պնդմամբ՝ մի կողմից այսպիսի շատ երկար ապրած հուշարձան ունենալը շատ լավ է, բայց այդ դեպքում ժամանակագրական շերտերը խառնվում են, մյուս կողմից էլ, ի զարմանս

Կնքվել է Քաղաքական համագործակցության համաձայնագիր

էջ 1

Երեւան, 24 փետրվարի 2016թ.

Քաղաքական համագործակցության համաձայնագիր

I. Ընդհանուր դրույթներ

Հայաստանի Հանրապետական կուսակցությունը եւ Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը՝

- ելնելով Հայաստանի Հանրապետության ներքին եւ արտաքին մարտահրավերները երկու կուսակցությունների ներուժի մեկտեղմամբ հաղթահարելու հրամայականից,
- նպատակ ունենալով ամրապնդել Հայաստանի Հանրապետության եւ Արցախի անվտանգությունն ու ժողովրդավարական կայունությունը՝ ապահովել երկրի արագընթաց զարգացումը, բարելավել հասարակությունում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը,
- հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների ընձեռած հնարավորություններն ու հանրային կյանքի սահմանադրականացման հանձնառությունները,
- առաջնորդվելով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրում ամրագրված մոտեցումներով,
- հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության նախագահի 2016 թվականի փետրվարի 12-ի ելույթում արծարծված մոտեցումները, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետական կուսակցության եւ Հայ Յեղափոխական Դաշնակցության՝ Հայաստանի քաղաքական օրակարգի առաջնահերթությունների ընդհանրությունը,
- համատեղ ստանձնելով Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրերի իրականացման պատասխանատվությունը՝
- կնքում են քաղաքական համագործակցության սույն համաձայնագիրը՝ հանուն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության:

II. Քաղաքական համագործակցության ռազմավարական ուղղությունները

1. Իրականացնել 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով փոփոխված ՀՀ սահմանադրությունից բխող հրատապ քայլերը.

1.1. Հասարակական-քաղաքական բնագավառում.

1.1.1. Շարունակել բարեփոխել մարդու իրավունքներն ու ազատությունները երաշխավորող համակարգը՝ ապահովելով մարդու արժանապատվության անխախտելիությունն ու իրավունքի գերակայության սկզբունքի լիարժեք իրացումը:

1.1.2. Ընտրական նոր օրենսգրքով եւ Հանրաքվեի մասին նոր օրենքով երաշխավորել ազատ, հանրության համար վստահելի ընտրությունների եւ հանրաքվեների կազմակերպումն ու անցկացումը, անմիջական ժողովրդավարության սահմանադրական նորմերի գործադրումը:

1.1.3. Կուսակցությունների մասին նոր օրենքով նպաստել քաղաքական ուժերի միջեւ մրցակցության, հանդուրժողականության եւ համագործակցության մթնոլորտի խորացմանը, բազմակուսակցական համակարգի ամրապնդմանը ու ներքին ժողովրդավարության զարգացմանը, ապահովել կուսակցությունների գործունեության հավասար իրավական հնարավորություններ:

1.1.4. Դատական նոր օրենսգրքով եւ Սահմանադրական դատարանի մասին նոր օրենքով ամրապնդել անկախ եւ անաչառ դատական համակարգի գործունեության իրավական երաշխիքները:

1.1.5. Ազգային ժողովի Կանոնակարգ նոր օրենքով ապահովել օրենսդիր մարմնի արդյունավետ գործունեությունը՝ երաշխավորելով ընդդիմության հավասարակշռողհակակշռող քաղաքական գործառույթը:

1.1.6. Վերանայել Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանումը եւ ձեւավորել կայուն զարգացում երաշխավորող, պատասխանատու եւ արդյունավետ տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման համակարգեր:

1.1.7. Բարձրացնել պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության, հանրային ֆինանսների օգտագործման արդյունավետությունը, հաշվետվողականությունը եւ պատասխանատվության մակարդակը:

1.1.8. Ապահովել հանրային իշխանության՝ իրավունքով սահմանափակված լինելու սահմանադրական սկզբունքի լիարժեք գործադրումն ու գործառույթ-ինստիտուտ-լիազորություն-պատասխանատվություն շղթայի անխափան գործունեությունը:

1.1.9. Գործադրել շահերի բախման հնարավոր դեպքերը բացահայտելու ու կանխելու, անօրինական գործունեության համար անխուսափելիորեն պատասխանատվության ենթարկելու, բիզնեսն ու հանրային իշխանությունը տարանջատելու ամբողջական համակարգ:

1.1.10. Քաղաքացիական հասարակության եւ ընդդիմության գործուն մասնակցությամբ ձեւավորել կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ համակարգ: Օրենքով վերանայել բարձրագույն պաշտոնատարանձանց էթիկայի հանձնաժողովի գործառույթները, լիազորությունները եւ պատասխանատվությունը:

1.1.11. Վարել արհեստավարժության եւ հանրային վստահության չափանիշներին համապատասխանող կադրային քաղաքականություն՝ շարունակաբար լայնորեն ներգրավելով երիտասարդներին պետության կառավարման գործում:

1.1.12. Շարունակել կատարելագործել վարչական մարմինների գործունեությունը, այդ թվում՝ սահմանված պարտադիր վճարներն ու տուգանքները գանձելու մեխանիզմներին վերաբերող կառուցակարգերն ու ընթացակարգերը՝ անհրաժեշտության դեպքում հավելյալ օրենսդրական կարգավորումների, հատկապես օրենքների միասնական եւ հետեւողական կիրառման միջոցով գործնականում ապահովելով վարչարարության համաչափության, պատշաճ վարչարարության, այդ թվում՝ լսված լինելու սահմանադրական իրավունքները՝ հիմնական իրավունքների սահմանափակմանը վերաբերող սահմանադրական պահանջների, ներառյալ՝ հիմնական իրավունքների եւ ազատությունների էության անխախտելիության եւ որոշակիության սկզբունքի համատեքստում:

1.2. Սոցիալ-տնտեսական բնագավառում՝

1.2.1. Տնտեսական քաղաքականության հիմքում դնել սոցիալական շուկայական կողմնորոշումը: Կառուցվածքային բարեփոխումների միջոցով շարունակել տարազանել եւ բարձրացնել Հայաստանի տնտեսության մրցունակության աստիճանը:

1.2.2. Համատեղ ջանքեր ներդնել 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության սահմանադրության 86-րդ հոդվածով նախատեսված՝ պետության հիմնական նպատակների արդյունավետ իրականացման ուղղությամբ:

1.2.3. Բարձրացնել պետական սեփականության կառավարման եւ հանրային բարիքների տրամադրման որակն ու արդյունավետությունը, սեփականության իրավունքի եւ ներդրումների պաշտպանության մակարդակը:

1.2.4. Գործադրել ակտիվ համամենաշնորհային քաղաքականություն եւ գործնականում երաշխավորել ազատ ձեռներեցությունը, տնտեսական գործունեությունն ու մրցակցությունը:

1.2.5. Խթանել խնայողությունների ձեւավորումը, ներդրումների ներգրավումը, աշխատատեղերի ստեղծումը, իրագործել տարածքների համաչափ ու կայուն զարգացման ծրագրեր, վերանայել հարկային քաղաքականությունը:

1.2.6. Մեծացնել տնտեսության դրամայնացման աստիճանը, գյուղատնտեսությունում, փոքր ու միջին բիզնեսում համակարգային լուծումների միջոցով նվազեցնել թանկ եւ արտարժույթով արտահայտված վարկերից կախվածությունը, սոցիալական գյուղատնտեսությունից անցում կատարել արդյունաբերական գյուղատնտեսության:

1.2.7. Աշխատանքային պայմանների բարելավման, սոցիալական ապահովության եւ առողջության պահպանման ոլորտների քաղաքականության հիմքում դնել անձի արժանապատիվ գոյությունը, աղքատության նվազեցումը, կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը, պետական պարտադիր եւ կամավոր ապահովագրական համակարգերի զուգահեռ գործունեությունը:

1.2.8. Շարունակաբար բարձրացնել կրթական համակարգի որակը, բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման, ակադեմիական եւ հետազոտական ազատությունների աստիճանը, զարգացնել հիմնարար եւ կիրառական գիտությունները, ուժեղացնել աշխատաշուկայի եւ կրթական համակարգի միջեւ կապը, որակյալ կրթական ծառայությունների մատուցումը վերածել տարածաշրջանում Հայաստանի տնտեսության մրցակցային առավելության:

1.2.9. Գործնական քայլերով նպաստել պետության կենսագործունեության բոլոր բնագավառներում կանանց դերակատարման բարձրացմանը, կանանց եւ տղամարդկանց միջեւ փաստացի հավասարության խթանմանը:

մասնագետների, Աղիտու-3 քարայրն իդեալական շերտագրություն ունի:

Ծրագիրը շարունակական բնույթ ունի, ներկայումս հասել են մինչեւ 6 մ խորությամբ շերտին. անտիկ շերտը դեռեւս թույլ չի տալիս տեսնել պալեոլիթյան շերտը: 2016թ. գերմանական կողմն անտիկ շերտի պեղումներին չի մասնակցի, քանի որ նրանց հետաքրքիր չէ այդ շրջանը: Բացի դրանից՝ նրանք այդ շրջանի մասնագետներ չեն: Փոխարենը նրանք կկատարեն պեղումների շնորհիվ դուրս բերված հազարավոր իրերի հաշվում, գծագրում, լուսանկարում եւ այլն: Բ.Գասպարյանը նշեց, որ այս տարի աշխատանքներում կընդգրկի ինստիտուտի՝ այդ շրջանով զբաղվող երիտասարդ մասնագետներին:

Կենտրոնական Հայաստանում, ինչպես օրինակ, Հրազդանի կիրճում, քարայրի խորությունը հասնում է 1-1.5 մ, իսկ Աղիտու-3 քարայրը 6 մ խորություն ունի, որի պատճառը հավանաբար նաեւ բնակլիմայական պայմաններն են (քամիների պատճառով նստվածքակուտակումներ են առաջացել):

Արշավախմբի հայկական կողմը կշարունակի պեղումները նաեւ Աղիտու-7 քարայրում՝ Աղիտու-3 քարայրից քիչ հեռու գտնվող՝ հուսալով բացահայտել պալեոլիթյան շրջանին պատկանող նոր սկզբնաղբյուր. Աղիտու-3 քարայրի ուսումնասիրությունը ավարտելու դեպքում Աղիտու-7 քարայրը կլինի ուսումնասիրության նոր օբյեկտ: *«Աղիտու-7 քարայրում դեռեւս միջնադարյան շերտն ենք ուսումնասիրում. քարայրը հավանաբար փարախ է ծառայել: Բայց այդտեղ մեկ այլ խնդիր կա. մի քանի մետր եւս բացելու դեպքում հավանաբար պեղավայրի չափերն ավելացնելու կարիք կլինի»,* – նշեց Բ.Գասպարյանը:

Հնագետի հավաստմամբ՝ գերմանական կողմի հետ համագործակցությունը նախեւառաջ հնարավորություն է տալիս հետազոտությունները կատարել գիտության ամենավերջին ձեռքբերում համարվող սարքավորումներով հագեցած լաբորատորիաներում: Հնագիտական աշխատանքների համար ներդրված գումարի առյուծի բաժինը գերմանական կողմն է ապահովում. իհարկե, Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտը եւս կատարում է ներդրում: Կարեւոր է նաեւ այն հանգամանքը, որ անգլերենով հոդվածներ են հրապարակվում մեր կատարած աշխատանքների վերաբերյալ, ինչը Աղիտու-3 քարայրին համաշխարհային հնչեղություն է տալիս:

Բորիս Գասպարյանն այս քարայրի գտածոներից հատկապես արժեւորում է 26-27 հազար տարվա շերտից հայտնաբերված ոսկրե ասեղը, որ ցույց է տալիս որսի ժամանակ առանձնացված կաշվեղենի՝ որպես հագուստ մարդկանց ծառայելը: Քա-

էջ 8

1.2.10. Շարունակել հետամուտ լինել ազգային մշակութային ժառանգության պահպանման ու միջազգայնացմանը, արվեստների զարգացմանը:

2. Ակտիվ ժողովրդագրական քաղաքականության, բազմակենտրոն եւ համաչափ զարգացման ծրագրերի իրականացմամբ նպաստել ազգաբնակչության թվաքանակի աճին:

3. Զարգացնել եւ ամրապնդել Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգության համակարգերը:

4. Շարունակել քայլեր ձեռնարկել Հայաստանի միջազգային հեղինակության բարձրացման, հայոց պետականության ամրապնդման, հայապահպանման եւ հայրենադարձության կազմակերպման գործում հայկական սփյուռքի դերի ու մասնակցության խորացման ուղղությամբ:

III. Քաղաքական համագործակցության կազմակերպման կարգը

1. Քաղաքական համագործակցության դաշտը ներառում է պետության կյանքի ներքին եւ արտաքին բոլոր ոլորտները:

2. Քաղաքական համագործակցության կողմերն առաջնորդվում են փոխադարձ հարգանքի, փոխըմբռնման, հանդուրժողականության, տարաձայնությունները բանակցությունների եւ քննարկումների միջոցով լուծելու մոտեցումներով՝ հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության ամբողջական պատասխանատվության գիտակցմամբ:

3. Քաղաքական համագործակցության կողմերը պարտավորվում են:

3.1. Համագործակցության ուղղություններին համապատասխան իրականացնել հայեցակարգային եւ ռազմավարական նշանակության նախագծերի քննարկում՝ միասնական դիրքորոշում ձեւավորելու նպատակով:

3.2. Համատեղ ջանքեր գործադրել պետական կառավարման արդյունավետության բարձրացման եւ նրա նկատմամբ հանրային վստահության ամրապնդման ուղղությամբ, այդ թվում՝ կառավարության կառուցվածքին, գործունեության կարգին եւ կադրային քաղաքականությանը վերաբերող որոշումներ կայացնելիս:

3.3. Համագործակցության կողմերից մեկի առաջարկությամբ՝ քննարկման առարկա դարձնել Ազգային ժողովի եւ Կառավարության գործունեությանը վերաբերող ցանկացած հարց:

3.4. Ապահովել համագործակցության շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների իրագործումը իշխանության տարբեր մակարդակներում եւ օղակներում:

4. Քաղաքական համագործակցության աշխատանքների արդյունավետության, կանոնավոր միջկուսակցական շփումների ապահովման եւ տեսակետների համադրման նպատակով ձեւավորվում է համագործակցության խորհուրդ: Խորհրդի գործունեությունը իրականացվում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են կանոնավոր պարբերականությամբ:

5. Համագործակցության կողմերի տարաձայնությունները լուծվում են խորհրդատվությունների միջոցով: Խորհրդատվությունների արդյունքների վերաբերյալ կողմերի տեսակետները կարող են հրապարակվել եւ մեկնաբանվել կողմերի փոխհամաձայնությամբ: Անհաղթահարելի տարաձայնությունների առաջացման դեպքում կուսակցություններից յուրաքանչյուրը, մյուս կողմին գրավոր տեղեկացնելով, կարող է դադարեցնել քաղաքական համագործակցությունը:

Հայաստանի Հանրապետական կուսակցության նախագահի տեղակալ
Արմեն Աշոտյան
ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի ներկայացուցիչ
Աղվան Վարդանյան
president.am

Մի հուշարձանի պատմություն

էջ 5

նախագիծը մրցույթով է հաղթող ճանաչվել: Փառք ու պատիվ այն դժվարին օրերին շրջանը ղեկավարող այրերին, որ նախապատվությունը տվել են հենց այդ նախագծին: Պարզեցինք նաեւ, որ հուշարձանի կառուցման աշխատանքները ղեկավարել է քաղխորհրդի շինտեղամասի ինժեներ Նիկոլայ Մաթեւոսյանը:

Ի դեպ, նա է եղել նաեւ Ակներ-Գորիս խմելու ջրատարի եւ քաղաքի ներքին ջրացանցի նախագծման հեղինակն ու կառուցման աշխատանքների ղեկավարը: Հավանաբար այդ գործերի համար էլ երախտապարտ գորիսեցիները նրան տվել են «Ինժեներ» պատվանունը:

Դառնանք հուշարձանին: Մտածեցինք, որ այս հարցում մեզ օգտակար կարող է լինել համացանցը: Իրոք, Ռաֆայել Իսրայելյանին նվիրված էջում հարուստ տեղեկություններ կան հանրաճանաչ ճարտարապետի մասին: Կենսագրական



Ռաֆայել Իսրայելյան

Նիկոլայ Մաթեւոսյան

Յոթ աղբյուր հուշարձան

ակնարկի հետ խոսվում է հեղինակի անհատական ցուցահանդեսների (3) մասին, բերվում հայ եւ այլազգի մտավորականների կողմից նրա աշխատանքներին տրված գնահատականները: Իմանում ենք, որ նա է «Սարդարապատի հերոսամարտի» համալիրի, Երեւանի հաղթանակի զբոսայգու Հաղթական կամարի, Նյու-Յորքի սբ Վարդան եկեղեցու, Երեւանի գինու կոմբինատի շենքի, Հայրենական մեծ պատերազմին նվիրված բազմաթիվ հուշարձանների հեղինակը: Խոսվում է նաեւ գյուղական համայնքների համար նրա կատարած նախագծերի մասին, բերվում ճարտարապետի գործերի ցուցակը, բայց նույնիսկ այդ թվարկումների մեջ մեր հուշարձանի մասին խոսք չկա, որի մասին հարկ համարեցինք տեղյակ պահել էջը պատրաստողներին: Արձագանքը չուշացավ. պարզվեց, որ մեր հուշարձանի նման մոռացված կառույցներ էլի կան, որոնց մասին էջ պատրաստողներն ուղղակի չգիտեն: Կարծում եմ, որ մեծ մարդու հոգեւոր ժառանգության ամբողջական պատկերի ստեղծումը բոլորիս պարտքն է: Այնպես որ խնդրում ենք բոլոր նրանց, ովքեր տեղեկություններ ունեն նման կառույցների մասին, դրանք փոխանցեն էջին (www.rafaelisraelyan.com):

Շարունակենք: Իմ քաղաքում կառուցված հուշարձանը մի առանձնահատուկ խորհուրդ էլ ունի: Մի քանի տարի առաջ գործարկվեց Գինեսի ռեկորդների գրքում գրանցված աշխարհի ամենաերկար ճոպանուղին, որը 10-12 րոպեի ընթացքում Որոտանի գեղատեսիլ կիրճի վրայով ձեզ հասցնում է տասներորդ դարում կառուցված ճարտարապետական հոյակերտ կոթող Տաթեւի տաճար: Ճոպանուղու գործարկումից հետո գեղատեսիլ բնությամբ Սյունիք այցելող տուրիստների թիվը բազմապատկվել է: Լրագրիս երաժշտասեր ընթերցողներին քաջ ծանոթ է մեր հայրենակից, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Կոնստանտին Օրբելյանի անունը: Բազում հրաշալի ստեղծագործությունների շարքում նա մի հրաշալի երգ էլ մեր քաղաքի մասին ունի՝ «Ով Գորիսը չի տեսել, չի տեսել աշխարհ»: Դա միայն թեւավոր խոսք չէ: Այո, տեսնելու շատ բան կա մեր քաղաքում:

Մեծերի անունները հաճախ ճնշում են մեզ, իշխում մեր գիտակցության վրա, թույլ չեն տալիս տվյալ թեմայի մասին իրենց գրածից, մտորումներից զատ ուրիշ այլ բան տեսնել: Այդպես է մեր սիրելի Գորիսի պարագային: Թվում է, թե Ակսել Բակունցի «Կյորեսից» եւ Սերո Խանզադյանի «Մատյան եղելությանց»-ից հետո անհնար է Գորիսի մասին ուշադրության արժանի վավերագրական որեւէ բան ստեղծել: Իմ նման մտածելակերպը չի բաժանում մերօրյա բանաստեղծ Տիգրան Գրիգորյանը:

«Ժամանակ չունեի ավելի կարճ գրելու համար» բոլոր մեծերին վերագրվող հայտնի խոսքերի պրիզմայով նայելիս հասկանում ես, որ Տ. Գրիգորյանն ունեցել է այդ ժամանակը ու դեռեւս 2003թ.-ին ստեղծել «Կեղծ արժեքներն իմ քաղաքում հարգի չեն» վերնագրով դիմանկար գոհարը: Դա դիմանկար է, որովհետեւ Գորիսը շնչող, ապրող, սեփական դիմագիծն ու բնավորությունն ունեցող օրգանիզմ է, իսկ Տիգրանի ստեղծածն էլ գեղանկարչի տեսնող, մաթեմատիկոսի վերլուծող, բանաստեղծի գերող ու կախարդող մտքի արդյունք է:

Թող ընթերցողը չմտածի, թե շեղվել եմ թեմայից: Ոչ, հազար անգամ ոչ: Հիշյալ դիմանկարում Տիգրանը նորից հիշեցնում է մեզ, որ Գորիսը, աշխարհագրական դիրքով լինելով ծայրամասային քաղաք, երբեք չի եղել գավառական: Նա միշտ էլ բարձրաշխարհիկ է եղել: Գորիսը տնտղում, ծանր ու թեթեւ է անում, եւ վերցնում միայն այն, ինչ լավն է, բարձր է ու եզակի: Այդպես եղել է նաեւ մեր հուշարձանի ընտրությունը կատարելիս, երբ առավելությունը տրվել է Յոթ աղբյուրին:

Եթե հուշարձանն առաջին անգամ տեսնողը տեղացիներին հարցնի նրա անվան ծագման մասին, մեկը նրան կասի, որ դա կառուցող վարպետի նմանատիպ յոթերորդ աղբյուրն է, այդ պատճառով էլ կոչվում է Յոթ աղբյուր, իսկ մեկ ուրիշն էլ կարող է ասել, որ աղբյուրն ունի յոթ ակ, որոնցից ջուր է հոսում, այդ պատճառով էլ կոչվում է Յոթ աղբյուր: Այսպես, թե այնպես, երկու դեպքում էլ շոշափվում է «յոթ» բառը՝ դրա մեջ որոշակի խորհուրդ դնելով:

Դարեր ի վեր հայ ժողովուրդն էլ ուրիշ ժողովուրդների նման ջրի մեջ հավերժության խորհուրդ է տեսել: Օրինակ, ընդունված բարեմաղթություն է՝ կյանքդ ջրի նման երկարի, հաճախ ասվածն ուղղելով աղբյուրը կառուցողին:

Իմ հիշատակած աղբյուրի առանձնահատուկ լինելը նաեւ այն է, որ նրա մեջ արտացոլվում է մեր ժողովրդի անսահման հավատը հաղթանակի նկատմամբ: Երախտապարտ համաքաղաքացիներս հուշարձանն սկսել են կառուցել այն ժամանակ, երբ ֆաշիստական զորքերը դեռ Վոլգայի ափերին, իսկ գերմանացիների դաշնակից Թուրքիայի՝ մինչեւ ատամները զինված քսաներեք դիվիզիաներն Արաքսի ափին էին: Վերջիններս սպասում էին Ստալինգրադի անկմանը, որպեսզի հայ ժողովրդի անունը վերջնականապես ջնջեն քարտեզի երեսից: Ահա այդ օրերին է կառուցվել հուշարձանը: Նույնիսկ պատերազմի բուն ծանրությունն իրենց վրա տարած ժողովուրդները նման օրինակ չունեն:

Քաղաք այցելող տուրիստները, վայելելով աղբյուր-հուշարձանի սառնորակ ջուրը, քիչ հեռանում են նրանից ու իրենց լուսանկարչական ապարատները, նկարահանող ժամանակակից մյուս սարքերն ուղղում դեպի այն: Հուշարձանի ճակատը պսակված է հայերեն ու ռուսերեն հետեւյալ գրությամբ. «Հուշարձանը կառուցվել է Հայրենական մեծ պատերազմի տարիներին 1943-1945թթ.»: Մնում է ավելացնել, որ դեպի զբոսայգին նայող ճակատն էլ զարդարում են գուսան Աշոտի «Հուշարձաններ» երգի հետեւյալ տողերը.

Նրանց արդար հոգիներից
Բխում է սառը, զուլալ աղբյուր,
Ամեն անգամ ջուր խմելիս՝
Շրթունքներով կդպանք համբույր...

Այսքանը:

Այո, սերն ու հավատն աշխարհ են պահում: Նրանք զորեղ են: Աշխարհն ու խաղաղությունն էլ նրանք են փրկելու:

Ռեդիկ Հայրապետյան

Աղիտու-3 քարայրը կմնա որպես վերին պալեոլիթյան դասական հուշարձան

էջ 7

րայրի շերտերում հայտնաբերված օջախների հետքերից, նրանց շուրջը սփռված հազարավոր քարե գործիքներից, նետասլաքներից, կենդանիների ոսկորներից հաստատապես կարելի է ասել, որ այն ժամանակվա մարդու գործունեության հիմնական ուղղվածությունը որսորդությունն էր:

Հայտնաբերված գտածոների շնորհիվ հնարավոր է պատկերացում կազմել ոչ միայն այն ժամանակվա մարդու գործունեության, այլեւ շրջակա միջավայրի կենդանական, բուսական աշխարհի, կլիմայի վերաբերյալ: Կենդանիների ոսկորները ցուցադրական արժեք չունեն, բայց ԴՆԹ հետազոտությունների համար բավականին հետաքրքիր են: Պալեոլիթյան շրջանի մարդու ոսկոր չի հայտնաբերվել, բայց անտիկ շրջանի դամբարանից գտնվել է:

Կենդանական աշխարհից հետաքրքրական է գայլի առկայությունը: Գայլն անընդհատ ուղեկցել է մարդուն. ամենայն հավանականությամբ երբ մարդը լքել է քարայրը, գայլը մտել է այնտեղ եւ կերել մարդու կերակրի մնացորդները, կամ էլ մարդը ուտելիս բաժին է հանել նաեւ գայլին: *«Համենայն դեպս ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գայլը մշտապես գտնվել է մարդու շրջակայքում, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ հավանաբար սկսվում էր շան ընտելացման ժամանակաշրջանը: Թեկուզեւ քարայրից հայտնաբերված գայլի ոսկորի ԴՆԹ-ն շան ԴՆԹ-ի հետ որեւէ կապ չունի (Սիբիրում այդ ժամանակաշրջանում շան ընտելացման պրոցեսն արդեն ընթանում էր)»,* – նշեց հնագետը:

Ի դեպ, ծովախխունջներից պատրաստված շարանն առաջին գտածոն է, որ նախեւառաջ ցույց է տալիս հարեւան երկրների հետ կապերը, եւ երկրորդ՝ մարդու սիմվոլիկ մտածելակերպը: Եվ բնականաբար Աղիտու-3 քարայրն այս ամենով հանդերձ առաջնակարգ հուշարձան է Հայաստանի եւ տարածաշրջանի համար: Արշավախմբի հայկական կողմի ղեկավարի տեղեկացմամբ՝ նմանատիպ հուշարձանների թիվը Հայաստանում գնալով ավելանում է, բայց Աղիտու-3 քարայրն իր ուսումնասիրության մակարդակով կմնա որպես վերին պալեոլիթյան դասական հուշարձան:

Պեղումների շնորհիվ հայտնաբերված գտածոները դեռեւս հետազոտման, մշակման փուլում են, եւ հայտնի չէ, թե որ թանգարանը կլինի նրանց վերջնական հանգրվանը:

«Ապագայում կարելի է այդ քարայրը դարձնել տուրիստական զբոսավայր, ինչի համար մեծ ներդրումներ հարկավոր չեն (Իսրայելի փորձը հաշվի առնելով՝ կարելի է պեղված հատվածներն ամրակայել, մուլյաժներ տեղադրել եւ այլն): Սա եկամտի աղբյուր կլինի նախեւառաջ գյուղացիների համար: Բացի դրանից՝ Հյուսիս-հարավ կառուցվելիք ճանապարհին Աղիտու-3 քարայրը կլրացնի այդ տարածաշրջանի հետաքրքիր ու արժեքավոր հուշակոթողների շարքը», – նշեց Բ.Գասպարյանը:

Հնագույն հուշարձանների հանդեպ իշխանավորների հետաքրքրվածության մասին հարցին այսպես պատասխանեց հնագետը. *«Մեր իշխանությունները սիրում են հպարտանալ: Իմ կարծիքով՝ հնագիտական աշխատանքները վերջացնելուց հետո, երբ հերթը հասնի հուշարձանի թանգարանացմանը, թե՛ տեղական, թե՛ մարզային իշխանությունները շահագրգռվածություն կցուցաբերեն: Մենք հանդես կգանք առաջարկներով, եւ չեմ կարծում, որ իշխանությունները քարայրը պահպանելու համար համապատասխան միջոցներ չհայթայթեն»:*

Ինչպես նշեց Բ.Գասպարյանը, հուշարձանն աչքի լույսի պես պահողը տեղաբնակներն են, որոնց համար այդ պեղումները նախեւառաջ ապահովում են աշխատատեղ: Բացի դրանից՝ նրանք գիտակցում են, որ պիտի դադարեն ապրել ոսկի գտնելու տենդով: Աստիճանաբար պիտի ձեւավորվի այն գիտակցական մակարդակը, որ հայտնաբերված ոսկորն ավելի թանկ կարող է արժենալ:

Թե՛ համայնքի ղեկավարության, թե՛ բնակիչների հետ բարիդրացիական հարաբերություններ են ստեղծվել, եւ հնագիտական աշխատանքները կատարվում են ջերմ մթնոլորտում:

«Սյունիքը մեզանում հնագիտորեն ամենաթույլ ուսումնասիրված տարածքն է, եւ այդ առումով կատարված եւ կատարվելիք աշխատանքները նոր բացահայտումներ կտան: Սյունիքի հողն իր խորքերում դեռ շատ գաղտնիքներ ունի թաքցրած», – զրույցն ամփոփեց արշավախմբի ղեկավար Բորիս Գասպարյանը:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Քարայրից հայտնաբերված քարե գործիքների գրչանկարները

Միջնադարյան թոնիր քարայրի վերին շերտում

Անտիկ դամբարանը

Մեծանուն պոետի օրն էր

Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրն է փետրվարի 19-ը, այդ օրը 2008 թվականից ի վեր նշվում է նաեւ գիրք նվիրելու օր: Օրվա խորհրդին էր նվիրված մարզային գրադարանի սպասարկման բաժնում կազմակերպված «Մեր հավերժի բանալին մեր լեզուն է» խորագրով ցերեկույթը: Միջոցառմանը մասնակցում էին «Հայաստանում Եվրոպական քոլեջ» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի սովորողները՝ դասախոս Հասմիկ Գրիգորյանի գլխավորությամբ: Հնչեցին հայոց լեզվին նվիրված՝ հայոց մեծերի ասույթները, հայ դասականների բանաստեղծություններ, հատվածներ Պարույր Սեւակի «Պահպանենք եւ հարստացնենք մայրենին» հոդվածից: Հնչեցին նաեւ հայկական ժողովրդական մեղեդիներ դպրոցականների կատարմամբ: Ցերեկույթի ժամանակ ներկայացվեցին առօրյա խոսքում հանդիպող լեզվական սխալներ, մանավանդ բայական խնդրառության դեպքում:

Օրվա խորհրդին պատշաճող հիշենք Մեծն Թումանյանի խոսքը. *«Աշխատեցեք ձեր սիրտը պահել մաքուր ու լիքը՝ ամենալավ ու ամենաբարի ցանկություններով, աշխարհին ու մարդուն նայեք բարի սրտով, պայծառ հայացքով»:*

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Տոլորսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (11,5 ժամ) ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր, ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.
1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Երկու լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ մարտի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի «Տոլորսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա մարտի 29-ին՝ ժամը 12:00-ին, «Տոլորսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 077 05 58 06 հեռախոսահամարով:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է 2 սենյականոց բնակարան, 76.35 քմ ընդհանուր մակերեսով: Հասցե՝ ք.Կապան, Մելիք-Ստեփանյան 4, 3-հարկանի շենքի 2-րդ հարկ: Ստալինյան նախագիծ, գազիֆիկացված է, վիճակը՝ բարվոք: Զանգահարել՝ (094) 766 425:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ՎԱԶ 21 014 - 2006թ. արտադրության: Գազի բալոն՝ 1.2լ, գույնը՝ շագանակագույն: Զանգահարել՝ (093) 896 384:

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47**:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1747, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 26.02.2016թ.: